# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 106, ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ 2015





# ԾՆՈՒՆԴԸ՝ ԼՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ

«*Եթէ Ես աշխարհ եկած չլինէի…*» (*Յհ* 15.22)

Յովհաննու Աւետարանի մէջ կարդում ենք վերոյիշեալ բառերը, որոնք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շրթներից արտասանւած բառերն են եւ մեզ հրաւիրում են մտածելու թէ՝ ինչ կը լինէր, եթէ Նա չգար աշխարհ: Ի՞նչ կը լինէր, եթէ Նա չծնուէր Բեթղեհեմում: Ի՞նչ կը լինէր, եթէ Նա չպատգամէր ու չփոխանցէր աստուածային ճշմարիտ խօսքերը, եթէ Նա չարտասանէր Աստծու կամքը բացատրող «Երանիները», եթէ Նա չքայլէր ջրի վրայ: Ի՞նչ կը լինէր, եթէ Նա չբժշկէր հիւանդին, կոյրին տեսողութիւն չտար, խուլին՝ լսողութիւն, համրին՝ խօսելու եւ անդամալոյծին՝ քայլելու կարողութիւն: Ի՞նչ կը լինէր, եթէ Նա մեռելին յարութիւն չտար, եթէ Նա չխաչուէր, չթաղուէր ու յարութիւն չառնէր, եթէ Նա Իր աշակերտներին չուղարկէր աշխարհ՝ Իր ճշմարիտ վարդապետութիւնը քարոզելու: Ի՞նչ կը լինէր, որտե՞ղ կը լինէինք մենք եւ ինչպիսի՞ աշխարհ կունենայինք: Արդեօք կը փոխուէ՞ր ամէն ինչ, եթէ Նա աշխարհ չգար:

Հին Կտակարանի մարգարէները խօսում են սպասւած մի Մեսիայի կամ մի Փրկչի ծնունդի մասին. ամենից վառ օրինակներից մէկն է Միքիա մարգարէի բացատրութիւնը. «***Եւ դու՝ Բեթղեհե՛մ, Եփրաթայի սակաւամարդ տուն, կը լինես Յուդայի երկրի հազարաւորների մէջ, քեզանից պիտի ելնի Ինձ համար Իսրայէլի մի Իշխան եւ Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է***» (*Մք* 5.2): Այո՛, եթէ Քրիստոսը չգար՝ Աստծու խոստումը չէր իրականանալու, եթէ Քրիստոսը չգար՝ աշխարհը կը շարունակէր մնալ խաւարի մէջ: Եթէ Քրիստոսը չգար, չէինք իմանալու, որ «***Աստուած սէր է***»: Եթէ Քրիստոսը չգար՝ ոչ մի տարածութիւն չէր լինելու մեղքի եւ մարդու միջեւ: Եթէ Քրիստոսը չգար՝ չէինք ունենալու «Աւետարան»՝ հաւատալու համար: Եթէ Քրիստոսը չգար, ո՛չ ծնունդ եւ ո՛չ յարութիւն չէր լինելու: Եթէ Քրիստոսը չգար՝ յոյս չէինք ունենալու գերեզմանից այն կողմ: Եւ վերջապէս, եթէ Քրիստոսը չգար՝ կորստեան մատնւած կը մնայինք եւ չէինք ունենալու մի Փրկիչ՝ մեզ մեղքերից ազատագրող:

Արժում է այստեղ լսել հրեշտակի բարի լուրը՝ «***Այսօր Դաւթի քաղաքում ծնուեց Փրկիչը, որ օծեալ Տէրն է: Ձեզ համար ապացոյց թող լինի հետեւեալը. այնտեղ դուք կը գտնէք խանձարուրով փաթաթւած եւ մսուրի մէջ դրւած մի Մանկան***» (*Ղկ* 2.11-12): Այո՛, Յիսուսն Ինքն ասաց. «*եթէ աշխարհ եկած չլինէի*», բայց փառք Աստծու, որ Նա եկաւ… Պօղոս առաքեալը գեղեցօրէն բնութագրել է ասելով. «***Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով՝ Աստուած աշխարհ ուղարկեց Իր Որդուն, որը ծնուեց մի կնոջից եւ ապրեց Օրէնքի տակ***» (*Գղ* 4.4):

Այսօր տօնում ենք Ծնունդը Մեծ Բարերարի. Նա, որ ծնւեց աղքատիկ մի մսուրում, յարդէ անկողնում, խոտէ վերմակի տակ: Աստուած ժամանակը հասած համարելով՝ ուղարկեց Իր Միածին Որդուն եւ Իր խոստումը կատարեց: Երբ աշխարհը խաւարի եւ չարութեան մէջ էր ընկղմւած, մարդը հեռացել էր Աստծուց, աստուածային ճշմարիտ պատկերը խաթարուել էր իր մէջ, չէր ճանաչում սիրոյ Աստծուն, որ իր կեանքի Աղբիւրն էր եւ իր սրտի Կրակը: Մի խօսքով՝ ո՛չ կանուխ էր եւ ո՛չ՝ ուշ. Աստուած պատրաստում էր աշխարհը, Նա երբեք չմոռացաւ մարդուն, չլքեց նրան. ընդհակառակը՝ ճիշտ ժամանակի լրումին ուղարկեց Իր Որդուն, որպէսզի աշխարհը վերածի սիրոյ Աստծու բնակարանի: Այո՛, Յիսուս մանուկն էր Փրկիչը աշխարհի: Դժբախտաբար Նրա ծնունդի ժամանակ աշխարհը տեղ չունէր Նրան. Նա ծնւեց անշուք «ախոռում»: Նա դարձաւ կատարեալ մարդ՝ ամբողջապէս, որպէսզի մարդն աստուածանայ: Նա Իր աստուածային բարձրունքից խոնարհւեց, որպէսզի մարդը բարձրանայ եւ մօտենայ Աստծուն: Ահաւասիկ՝ ծնունդը Հրաշքի. մի Հրաշք, որ երեսուն տարիներ քայլեց, պատգամեց, բժշկեց եւ հրաշագործեց: Նա եղաւ մանուկների ճշմարիտ բարեկամը: Նա եղաւ աշխարհի թշուառների ու վշտակիրների,

խեղճերի, հիւանդների օգնականն ու մխիթարիչը: Նա, ի վերջոյ, եղաւ մեղաւորների եւ արհամարհւածների ճշմարիտ կարեկիցը:

Հարց տանք մենք մեզ՝ այսօր որքան՞վ ուրախ է մարդը, որ Աստծու Որդին՝ մեր բոլորի Փրկիչը, աշխարհ եկաւ: Այսօրւայ աշխարհի մէջ, Ծննդեան այս օրերին նւէրներ ենք փոխանակում իրար եւ ուրախութեամբ ենք բացում այդ նւէրները: Որքան՞վ մարդն անդրադառնում է, որ Աստւած ամենաթանկ նւէրը տւեց մեզ, ո՛չ թէ մի փայլուն թղթի մէջ եւ գոյնզգոյն ժապաւէններով զարդարւած, այլ՝ պարզ խանձարուրի մէջ փաթաթւած եւ անշուք ախոռի մէջ ծնւած մի Փրկիչ. այդ նւէրը քոնն է, իմն է, մեր բոլորինն է: Այդ նւէրն այնտեղ է՝ մեր սեփականութիւնն է. անձնապէս պէտք է գնանք եւ վերցնենք: Պատրա՞ստ ենք գնալու, այդ ճամբորդութիւնը կատարելու, Ծնւածին տեսնելու, Փրկչին գրկելու եւ փոխադրելու մեր սրտերի եւ հոգիների մէջ, դարձնելու հաւատի եւ սիրոյ մարմնացումը:

Ժամանակն իր լրումին հասել է. այսօրւայ աշխարհը որքա՜ն կարիքն ունի խաղաղութեան եւ արդարութեան Իշխանին եւ սիրող Փրկչին: Աստւած ժամանակը հասած համարելով՝ Իր Միածին Որդու միջոցով եկաւ այս անարդար աշխարհը արդար ու խաղաղ աշխարհի վերածելու, Իր ամենից թանկ կեանքը տւեց, որպէսի մարդը խաւարից դէպի Լոյս, մահւանից դէպի Կեանք առաջնորդւի: Երեսուն տարիներից յետոյ Իր տնօրինական կեանքն իր լրումին հասցրեց եւ Իր առաքելութիւնն աւարտեց ու դարձեալ երկինք բարձրացաւ եւ նստեց Իր Հօր աջ կողմում: Ի՞նչ փոխւեց այս աշխարհում: - Ոչի՛նչ. մարդը մնաց մեղքի նոյն տիղմի մէջ, աշխարհը մնաց անարդար, չարը շարունակեց տիրապետել, կեղծիքն ու սուտը խորացան: Դժբախտաբար մարդը մնաց նոյն անհնազանդ արարածը, անտեսեց աստւածային պատւիրանները, շարունակեց սպանել, գողանալ եւ ուրիշի ունեցւածքը յափշտակել. վկայ պատմութիւնը մեր ժողովրդի: Հայոց ցեղասպանութիւնից 100 տարի յետոյ ոչինչ չի փոխւել. մեր թշնամին տակաւին ուրանում է իր կատարած մեծագոյն սխալը: Աշխարը մնում է լուռ եւ անարդար: Ականատես եւ ականջալուր ենք այսօր, թէ ինչպէս մարդիկ շարունակում են չարին հնազանդւել, չարութեամբ, ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ վերաբերւել իրենց նմանի հետ, սպանել ու կոտորել:

Այսօր մարդկութիւնը մէկ անելիք ունի՝ իր հայեացքը դարձնել դէպի Բեթղեհէմ՝ արդարութիւնն ու խաղաղութիւնը վերահաստատելու, իր հայեացքը դարձնել դէպի Գողգոթա՝ լսելու Փրկչի ձայնը՝ «***Ես յաղթեցի աշխարհին***», իր հայեացքը դարձնել դէպի Ս. Յարութեան տաճար, յարուցեալ Քրիստոսի հետ մաքրւելու եւ վերածնւելու:

Ահա՛ պատգամը հրաշափառ Ս. Ծննդեան:

Ահա՛ երաշխիքը մեր փրկութեան:

Ահա՛ ճանապարհը յաւերժութեան:

* *
*

Ս. Ծննդեան տօնի առթիւ, սիրոյ իմ սրտագին ողջոյնս եմ ուղղում ձեզ՝ բոլորիդ, Պատգամաւորական Ժողովի անդամներին, Կրօնական եւ Թեմական խորհուրդներին, հոգեւորականաց դասին, ազգային-եկեղեցական մարմիններին, կրթական, բարեսիրական, կանանց, երիտասարդական, մարզական եւ մշակութային միութիւններին, կազմակերպութիւններին, ազգային վարժարանների եւ Կիրակնօրեայ դպրոցների ուսուցչական կազմերին եւ ուսանողութեան, Ծնողական խորհուրդներին, եկեղեցու սպասաւորներին, դպրաց դասերին, ազգային հաստատութիւններին եւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին անխտիր:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս՝**

**Քրիստոս Ծնաւ Եւ Յայտնեցաւ:**

**ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**
**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

6 յունւար, 2015
Ս. Ամենափրկչեան Վանք
Նոր Ջուղա

# ՍՊԱՀԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՒ ՆՐԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՂ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ

Կիրակի՝ 2015 թւականի յունւարի 4-ի կէսօրին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ պրն. Սաղայեան-Նեժադը, ընկերակցութեամբ Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասադզադեգանի եւ քաղաքապետարանի մի քանի բարձրաստիճան պաշտօնէութեան:



Ս. Ամենափրկչեան Վանքի Ծաղկեայ դահլիճում հիւրերին ընդունեցին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ առաջնորդարանի այլ մարմինների ատենապետերն ու ներկայացուցիչները:

Գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց քաղաքապետարանի բարձրաստիճան պատասխանատուների այցելութեան առթիւ, եւ գեղեցիկ երեւոյթ համարեց զանազան առիթներով երկկողմ այցելութիւնները, որոնք նպատակ ունեն միմեանց միջեւ բաժանելու ուրախութիւնը, ինչու չէ նաեւ ցաւերն ու դժւարութիւնները, այն համարելով միմեանց նկատմամբ փոխ-յարգանքի եւ համագոյակցութեան լաւագոյն արտայայտութիւններից մէկը:

Առաջնորդ Սրբազան Հայրը նշելով, որ աստւածային պատւիրանների անտեսումն ու մարդու հեռանալն աստւածամերձ կեանքից պատճառն ու սկզբնաղբիւրն են մարդկութեան բոլոր դժւարութիւնների, իրար հանդէպ ոխակալութեան եւ թշնամանքի, յուսաց, որ 2015 թւականին վերանալու են աշխարհում եւ յատկապէս տարածաշրջանում տիրող պատերազմական կացութիւնն ու բռնարարքները եւ մարդիկ կրկին անգամ վերագտնելու են խաղաղ եւ անդորր ապրելու հնարաւորութիւնը:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը յատուկ կերպով անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ այն փաստին, որ հայութեան համար 2015 թւականը կարեւոր եւ նշանակալից տարի է լինելու, շեշտեց. «Քանի դեռ Հայոց ցեղասպանութիւնը համաշխարհային ճանաչում չի գտել եւ չի դատապարտւել՝ մեծ է լինելու նման անմարդկային արարքների կրկնութեան հաւանականութիւնը, որի հետեւանքները տեսնում ենք այսօր՝ տարածաշրջանում»:

Բարի-դրացիական յարաբերութեան եւ համակեցութեան գեղեցիկ օրինակ համարելով Իրանն ու Սպահան քաղաքը, թեմակալ առաջնորդը գնահատեց երկու հարեւան երկրների՝ Իրանի եւ Հայաստանի միջեւ տիրող եւ օրըստօրէ զարգացող բազմաբնոյթ կապերը: Նա մատնանշելով Սպահան-Երեւան քոյր քաղաքներ լինելու իրողութիւնը, ցանկութիւն յայտնեց երկու քաղաքների միջեւ իրականացնել ուղիղ չւերթ:

Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ պրն. Սաղայեան-Նեժադը, երկրորդելով առաջնորդ Սրբազան Հօր խօսքերը եւ բազմաթիւ մէջբերումներ կատարելով իսլամ կրօնի սուրբ գրքից, շեշտեց, որ աստւածային պատւիրանների եւ Աստծու ուղարկած մարգարէների ուսուցումների գործադրութեան մէջ է պարփակւում խաղաղ եւ երջանիկ ապրելու գաղտնիքը:

Հանդիպմանը ներկայ գտնւող Սպահան քաղաքի շրջանների, հաստատութիւնների եւ միջազգային հարցերի համադրման տեղակալ ճրտպ. Ջամալի-Նեժադը կրկին դառնալով առաջնորդ Սրբազան Հօր ցանկութեանը, ուրախութեամբ յայտնեց, որ Սպահան-Երեւան ուղիղ չւերթի կազմակերպչական եւ նախապատրաստական աշխատանքներն արդէն ընթացքի մէջ են: Նա յիշեցնելով, որ այս տարի Միաստւածեան կրօնների Սպահանի գրասենեակի միջոցով կազմակերպւելու է միջազգային համագումար, գնահատեց առաջնորդարանի գործօն մասնակցութիւնը սոյն բնագաւառում:

Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանն եւս իր հերթին ուրախութիւն յայտնեց երկու քաղաքապետերի այցելութեան առթիւ, ապա յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց՝ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու հիմնադրութեան 350-ամեակի նշման ծրագրերի ընթացքում քաղաքապետերի եւ պետական այրերի մասնակցութեան եւ ցուցաբերած համագործակցութեան համար: Պրն. Մինասեանը հիւրերին տեղեկացրեց, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի սրբատառ կոնդակով «Արքութեան» տիտղոս է շնորհւել թեմակալ առաջնորդին, այն համարելով հայ համայնքի եւ Սպահան քաղաքի համար ուրախութեան առիթ: Այս կապակցութեամբ պատւիրակութեան անդամներն իրենց շնորհաւորանքները փոխանցեցին Սրբազան Հօրը:

Հանդիպման աւարտին, պրն. Սաղայեան-Նեժադը յուշանւէրներ յանձնեց ազգային առաջնորդարանի պատասխանատուներին:

# ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

2015 թւականի Ամանորի եւ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով Ս. Ամենափրկչեան վանքում թեմակալ առաջնորդին եւ ազգային իշխանութեան պատասխանատուներին այցելեցին պետական պաշտօնեաներ.

ա) 2014·12·27 *Մելլի դրամատան պատասխանատուներ*





բ) 2014·12·29 *Սադեռաթ դրամատան պատասխանատուներ*





գ) 2014·12·30 *Թեջառաթ դրամատան պատասխանատուներ*





դ) 2015·01·10 *Սպահանի Քաղ-խորհուրդ*





*ե) Սպահան, Եազդ եւ Ջհարմահալ նահանգների բանակի ընդհանուր հրամանատար*



*զ) Սպահանի պետական համալսարանի տնօրէն եւ միջազգային յարաբերութիւնների բաժնի պետ*



*է) Սպահանի Մշակութային ժառանգութեան հիմնարկի տնօրէն*



*ը) Սպահանի Քաղ-խորհրդի եւ Քաղաքապետարանի մարզանքի բաժնի պատասխանատուներ*



*թ) «Գիթի փասան» մարզական ակումբի տնօրէն եւ գործակիցներ*





*ժ) Սպահանի 3-րդ շրջանի Կրթա-դաստիարակչական հիմնարկի տնօրէն եւ հայոց ազգային դպրոցների պատասխանատուներ*





# ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Երկուշաբթի՝ 2015 թուականի յունուարի 12-ին, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, Սպահանի հայոց թեմի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի հրաւէրով հանդիպում տեղի ունեցաւ ազգային մարմինների եւ 100-ամեակի ենթայանձնախմբերի անդամների ներկայութեամբ:

Հանդիպման բացումը կատարեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի աղօթքով, որին յաջորդեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի նախագահ՝ պրն. Նոէլ Մինասեանի շնորհակալական խօսքը ուղղուած ներկաներին՝ հանդիպմանը մասնակցելու առթիւ: Նա նշելով, որ հաշուած ամիսներ են մնացել Ապրիլ ամսին, յայտնեց, թէ այս հանդիպումը կազմակերպուել է հանրագումարի բերելու մինչ այժմ մեր թեմում կատարուած աշխատանքները, ապա լսելու տեսակէտներ ու առաջարկներ, որոնք կօգնեն կենտրոնական յանձնախմբին առաւել յաջողութեամբ իրականացնելու աշխատանքները:



Պրն. Նոէլ Մինասեանի հրաւէրով հերթաբար հանդէս եկան Հրատարակչական, Իրանի իսլամական խորհրդարանի, Ս.Ա. Վանքի թանգարանի Հայոց ցեղասպանութեան տաղաւարի, Սոցիալական ցանցերի, Ս.Ա. Վանքի տարածքի բարեզարդման, Մշակութային միջոցառումների եւ Ս.Ա. Վանքի Հայոց ցեղասպանութեան յուշարձանի յարակից տարածքի բարեկարգման ենթայանձնախմբերի համակարգողները՝ զեկոյց ներկայացնելով իրենց կատարած աշխատանքներից, որի շարունակութեան մէջ ներկաներն առաջարկներ ու տեսակէտներ յայտնեցին աշխատանքների հեզասահ, կարգաւորուած եւ առաւել արդիւնաւէտ ընթանալու համար:

Այնուհետեւ արտայայտուեց թեմակալ առաջնորդը: Նա առաջին հերթին շնորհաւորեց ներկաների Նոր տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով բոլորի ընտանիքներին առողջութիւն եւ խաղաղութիւն, ապա ընդգծելով, որ 2015 թւականը իւրաքանչիւր հայի համար պատասխանատուութեան տարի է, յայտնեց, թէ սա մի հանգրւան է մեր դատն ու պահանջը ներկայացնելու ամբողջ աշխարհին: Սրբազան Հայրը կարեւորելով 100-ամեակի առնչութեամբ համահայկական մասշտաբով եւ միասնական ջանքերով հանդէս գալը, շեշտեց արտաքին ճակատի վրայ տարուող աշխատանքների, նաեւ համազգային ընդհանուր ռազմավարութեան եւ պահանջատիրութեան յստակեցման անհրաժեշտութիւնը:

Իր խօսքի աւարտին Սրբազան Հայրը բոլորին մաղթեց յաջողութիւն եւ յոյս յայտնեց, որ 2015 թւականը լինելու է հայ ժողովրդի նպատակների իրագործման տարի:

Վերջում ներկաներին բաժանւեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդանիշը ներկայացնող կրծքանշաններ:

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ

Ուրբաթ՝ 2015 թւականի յունւարի 16-ին, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն ընդունեց Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, Հ.Հ.-ի Գ.Ա.Ա.-ի թղթակից անդամ, պատմաբան, պրոֆ. Արամ Սիմոնեանին եւ նրան ընկերակցող համալսարանի պրոֆեսոր-դասախօսներին:



Հայրենիքից ժամանած պատուիրակութիւնը գերշ. Սրբազան Հօրը ներկայացրեց Իրան ժամանելու նպատակն ու իրականացրած ծրագրերը՝ Թեհրանում հայերէնագիտական ուսումնասիրութիւնների գրասենեակի հիմնադրման կապակցութեամբ:

Թեմակալ առաջնորդը շեշտելով Իրան-Հայաստան փոխյարաբերութիւնների ընդարձակման եւ զարգացման կարեւորութեանը, միաժամանակ կարեւոր նկատեց Երեւան-Սպահան քոյր քաղաքների բազմակողմանի համագործակցութեան ընդլայնումը, որի կապակցութեամբ մեծ դեր կարող են ունենալ երկու քաղաքների համալսարանները:

***



Նոյն օրը գերշ. Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Լիբանանի ազգային հեռուստաընկերութեան տնօրէն՝ Լոր Սուլէյմանը, իր հետ ունենալով իր գործակիցներից եւ Սպահանի պետական այրերից կազմուած մի պատուիրակութիւն: Նա Իրանի լրատուամիջոցների հետ առաւել համագործակցութիւններ ծաւալելու եւ յարաբերութիւններ զարգացնելու նպատակով գտնւում էր Իրանում:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն ընդգծելով լրատուամիջոցների առաքելութիւնը, ուժ ու կորով մաղթեց տնօրէնին, միաժամանակ շեշտեց տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձութիւնների վերաբերեալ ճշգրիտ տեղեկատուութիւն տարածելու անհրաժեշտութիւնը զանգւածային լրատուամիջոցների կողմից, ինչը կարող է համաշխարհային կարծիքի ճիշտ ձեւաւորման եւ հանգուցալուծող աշխատանքների առաջնորդել:

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՎՐԱՅ



Իրանի Իսլ. յեղափոխութեան յաղթանակի 36-րդ տարեդարձի առթիւ, ուրբաթ՝ փետրուարի 6-ի առաւօտեան, Նոր Ջուղայի հայոց ազգային գերեզմանատանը, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով եւ թեմի հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ նահատակների հոգիների խաղաղութեան համար:



Արարողութեանը ներկայ էին թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած հայ նահատակների հարազատները, Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց դպրոցների ուղեցոյց բաժնի աշակերտներն ու պատասխանատուները եւ ժողովուրդ:




Առանձնաբար հոգեհանգստեան արարողութիւն կատարւեց նահատակներ՝ Հենրիկ Տէր-Յովհաննիսեանի, Վարդան Աբրահամեանի, Ռայմոնդ Բաղրամեանի, Հրաչ Յակոբեանի ու Վրէժ Բաղումեանի շիրիմների վրայ եւ յիշւեց նաեւ նահատակ Մկրտիչ Թովմասեանը, որի շիրիմը գտնւում է Ահւազի հայոց ազգային գերեզմանատանը:

Ծրագրի երկրորդ բաժնում հնչեցին արտայայտութիւններ: Նահատակներին ձօնուած աշակերտական խօսքն ընթերցեց Տաթեւիկ Տէր-Մարտիրոսեանը, իսկ յանուն Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ե-

լոյթ ունեցաւ ատենապետ Նոէլ Մինասեանը: Պրն. Մինասեանը գեղեցիկ սովորութիւն համարելով Իրանի միւս ժողովուրդների հետ միասնաբար Յեղափոխութեան տարեդարձը տօնելը եւ նահատակների յիշատակը յարգելը, այսպէս շարունակեց. «Իւրաքանչիւր տարի այս արարողութեան ընթացքում մի կողմից տխրում ենք անդառնալի այս կորուստների ու խլւած երիտասարդ կեանքերի համար, իսկ միւս կողմից հպարտանում, քանի որ հայ նահատակների արեան գնով մեր ժողովուրդն ապացուցեց իր կարեւոր ներդրումն ու դերակատարութիւնը այս երկրի պատմութեան տարբեր հանգրւաններում: Մեր ժողովուրդը նաեւ ապացուցել է, որ Իրանի նկատմամբ ամբողջական պատասխանատուութիւն է կրում եւ երբեք անտարբեր չի անցել որեւէ իրադարձութիւնից»:



Վերջում ներկաներին իր պատգամը փոխանցեց Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, որը հայրենիքի ազատութեան ճամբին նահատակւելը երանելի մահ համարելով՝ ասաց. «Նահատակները սուրբեր են, ովքեր մոռանալով իրենց ընտանիքներին ու բարեկամներին, բոլորից վեր դասելով հայրենիքը եւ հողը, իրենց կեանքը զոհում են այդ ճամբին: Սա մեզ համար պատիւ է: Մենք պատիւ պիտի զգանք, որ այս երկրում մեր նահատակներով մեծանում ու բարձրանում ենք: Նրանք մեզ համար նպատակակէտ են, որոնցից պէտք է սովորենք խիզախութիւն, քաջութիւն, հաւատարմութիւն եւ յատկապէս յարգանք»:



Հայր Սուրբն իր խօսքի աւարտին թեմակալ առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ թեմի ազգային իշխանութեան անունից ցաւակցական խօսք ուղղեց նահատակների ընտանիքներին:

Նահատակների հարազատների անունից շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը:

## Üàð æàôÔ²ÚÆ Ð²ÚàôÂÆôÜÀ Ø²êÜ²Îò°ò 22 ´²ÐØ²ÜÆ ø²ÚÈ²ðÞ²ôÆÜ

Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի պատուիրակութիւնը մասնակցեց Իրանի իսլամական յեղափոխութեան 36-րդ տարեդարձի քայլարշաւին: Սոյն պատուիրակութեանը մաս էին կազմում արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, Հայոց եկեղեցու դպրաց դասի եւ Ս. Ամենափրկչեան վանքի պաշտօնէութեան ներկայացուցիչները եւ համայնքի անդամները:



Սպահանի «Սեփահ» փողոցով դէպի «Էմամ» հրապարակը ընթացող քայլարշաւին մասնակցած պատուիրակութիւնն առջեւից տանում էր Իրանի իսլամական յեղափոխութեան 36-րդ տարեդարձի առթիւ ազգային մարմինների շնորհաւորանքը պարունակող մի պաստառ:

Պատուիրակութեան մասնակցութիւնը ուշադրութեան արժանացաւ ոչ միայն քայլարշաւին մասնակցող ժողովրդի, այլ նաեւ պատասխանատուների կողմից, ովքեր բարձրախօսներով բազմիցս շնորհակալութիւն յայտնեցին հայ համայնքին՝ համայն ժողովրդի կողքին լինելու եւ քայլարշաւին մասնակցելու համար:

# ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ



2015 թուականի փետրուարի 11-ին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի գլխաւորութեամբ, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերը, Իրանի իսլամական յեղափոխութեան 36-րդ տարեդարձի առթիւ այցելեցին Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակ-զինուորներ՝ Հրաչ Յակոբեանի, Վարդան Աբրահամեանի, Վրէժ Բաղումեանի, Ռայմոնդ Խաթունննժադի (Բաղրամեան) եւ Հենրիկ Տ. Յովհաննիսեանի ընտանիքներին:

Պատւիրակութեան անդամները, հանդիպման ջերմ մթնոլորտում, մտերիմ զրոյց ունեցան նահատակների ընտանիքների հետ, նրանց մաղթելով առողջութիւն եւ երջանկութիւն: Ազգային մարմինների ներկայացուցիչները մեծապէս արժեւորեցին նահատակ հայորդիների հաւատարմութիւնը երկրի նկատմամբ եւ նրանց սխրանքն ու անձնազոհութիւնը, այն համարելով հայութեան համար պարծանքի եւ հպարտանալու առիթ:

## Ðð ² Ä º Þ î Æ.Æ.Ð.-ôØ Ð.Ð.-Æ ² ð î ² Î ² ð ¶ º ô ÈÆ ² ¼ ú ð ¸ º ê ä ² Üª ä ð Ü. ¶ ð Æ ¶ à ð ² è ² ø º È º ² ÜÆÜ

Աւարտելով Իրանի Իսլ. Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ պրն. Գրիգոր Առաքելեանի դիւանագիտական ծառայութեան ժամանակաշրջանը, յարգելի դեսպանի երկար տարիների գործունէութիւնը արժեւորելու եւ հրաժեշտի նպատակով, ազգային մարմինների համատեղ նախաձեռնութեամբ, երեքշաբթի՝ փետրուարի 17-ի երեկոյեան, Ս.Ա. Վանքի «Ծաղկեայ դահլիճ»-ում տեղի ունեցաւ ընդունելութիւն-հրաժեշտի երեկոյ:



Միջոցառմանը ներկայ էին տէր եւ տկն. Գրիգոր եւ Փառանձեմ Առաքելեանները, թեմակալ առաջնորդը եւ Նոր Ջուղայի ու Շահինշահրի ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում մեծարուեց յարգելի դեսպանը եւ նրա անմիջական ներդրումը՝ Իրան-Հայաստան երկու բարեկամ երկրների եւ ժողովուրդների յարաբերութիւնների ամրապնդման ու զարգացման գործում, ինչպէս նաեւ նրա սերտ գործակցութիւնը իրանահայ երեք թեմերի, ի մասնաւորի Սպահանի հայոց թեմի հետ եւ ցուցաբերած պատրաստակամութիւնը՝ համայնքային խնդիրներին աջակցելու ուղղութեամբ:

Պրն. Առաքելեանին ուղղած շնորհակալանքի եւ գնահատանքի ջերմ խօսքեր հնչեցին տարբեր կառոյցների ներկայացուցիչների կողմից, մասնաւորապէս իրենց երախտագիտութիւնը յայտնեցին հերթաբար Թեմական խորհրդի ատենապետը, Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչը եւ թեմակալ առաջնորդը:

Այնուհետեւ խօսք տրուեց մեծարգոյ դեսպանին, որը ընդգծելով Իրանի կարեւոր նշանակութիւնը Հայաստանի Հանրապետութեան համար, յոյս յայտնեց, որ ապագային առաւել ընդլայնելու են Իրան-Հայաստան փոխշահաւէտ յարաբերութիւններն ու փոխգործակցութիւնը:

Հրաժեշտի ընդունելութեան աւարտին, յանուն ազգային մարմինների յուշանուէր շնորհուեց պրն. Գրիգոր Առաքելեանին եւ բարի երթի մաղթանքներով փակւեց երեկոն:

# ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԶԱՒԷՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՍՊԱՀԱՆՈՒՄ

Երկուշաբթի՝ 2015 թուականի փետրուարի 23-ի յետմիջօրէի ժամը 1:30-ին, Սպահանի «Արուեստագէտների տան» շրջափակում, բազմահազար մարդկանց ներկայութեամբ տեղի ունեցաւ կինօքննադատ, ռեժիսոր, հեղինակ, դասախօս եւ Նոր Ջուղայի հարազատ զաւակ Զաւէն Ղուկասեանի հրաժեշտի արարողութիւնը:



Հոծ բազմութեան շարքերում, ծրագրին ներկայ էին հանգուցեալի հարազատները, Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց թեմի ազգային իշխանութեան եւ Հայ դատի յանձնախմբի ու հայ համայնքի ներկայացուցիչները, Սպահանի նախկին նահանգապետ Ալիռեզա Զաքեռ-Էսֆահանին, Սպահանի եւ Իրանի այլ քաղաքներից ժամանած արուեստագէտներ, կինոյի եւ հեռուստատեսութեան ռեժիսորներ, դերասաններ եւ հանգուցեալի ուսանողները:

Զաւէն Ղուկասեանի ուսանողները ճերմակ ժապաւէն կրելով եւ մէկ կարմիր վարդով մասնակցում էին հրաժեշտի արարողութեանը:



Ծրագրում ընդգրկուած էին մի շարք խօսքեր: Սկզբում ընթերցուեց Սպահանի նահանգապետ դկտր. Զառգառփուռի խօսքը: Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի եւ հայ համայնքի անունից արտայայտուեց Թեմական խորհրդի անդամ տկն. Քառոլին Դիլանչեանը՝ խորը վիշտ յայտնելով եւ ծանր կորուստ համարելով Զաւէն Ղուկասեանի մահը հայ համայնքի եւ Իրանի արուեստասէրների համար:

Յաջորդիւ հերթաբար արտայայտուեցին Սպահանի Իսլ. Առաջնորդութեան եւ մշակոյթի հիմնարկի կինոյի բաժնի տնօրէնի տեղակալ Աղայանզադէն, «Կինոյի տան» տնօրէն Մոհամմադ Մեհդի Ասքառփուրը, «Ֆաջր» ֆիլմի փառատօնի տնօրէն Ալիռեզա Ռեզադադը, փաստագրական ֆիլմերի ռեժիսոր Մոհամմադ Ռեզա Ասլանին, Սպահանի Արուեստից հիմնարկութեան տնօրէն Մեհդի Սէյեդնիան, ով ի միջի այլոց իր խօսքերի մէջ յայտարարեց, որ մօտ ապագայում հանրութեանը ներկայացուելու է Զաւէն Ղուկասեանի հեղինակած գիրքը՝ Սպահանի կինոյի վերաբերեալ, խօսեց դերասան Հուշանգ Հառիռչեանը, արտայայտուեց եւ հանգուցեալին մի երգ ձօնեց դասական երաժշտութեան վարպետ Ծահզէյդին:



Հրաժեշտի արարողութիւնից յետոյ հանգուցեալ Զաւէն Ղուկասեանի դին փոխադրուեց Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցի: Սգակիր բազմութիւնը «Արուեստագէտների տան» շրջափակից մինչեւ Սպահանի «Խաջու» կամուրջը լռութեամբ հետեւեց հանգուցեալի դիակը տեղափոխող դիակառքին, որի առջեւից քայլում էին հանգուցեալի հարազատներն ու ազգային իշխանութեան ներկայացուցիչները: Այնուհետեւ «Խաջու» կամուրջից ներկաները նախատեսուած հանրակառքերով տեղափոխուեցին Ս. Աստուածածին եկեղեցի: Եկեղեցական արարողութեանը, որը նախագահում էր Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ներկայ գտնուեցին Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն.

Աստուածաբանական եւ Միասնութեան կրոնների գրասենեակի պետ հօջաթօլէսլամ դկտր. Ահմադիին:



Զաւէն Ղուկասեանի յուղարկաւորութեան արարողութեան աւարտին առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացնելով հանգուցեալի կենսագրականը, խօսեց յաւիտենական կեանքի մասին, շեշտելով, որ Յիսուս Քրիստոսը, Իր խոստումի համաձայն, Իրեն հաւատացողների համար տեղ է պատրաստել Երկնքի արքայութեան մէջ, որին հասնելը հնարաւոր կը լինի միայն հաւատով, իսկ մահով ոչ թէ վերջանում է ամէն ինչ, այլ՝ այն դուռը եւ սկիզբն է յաւիտենական կեանքի, որի համար կարեւորն այն է, թէ ինչպէս ապրենք այս երկրաւոր կեանքում:



Գերշ. Սրբազան Հայրը վեր հանելով հանգուցեալի ծառայական կեանքի արժէքներն ու կարեւորութիւնը, նշեց, որ Զաւէն Ղուկասեանը հաւատաց Աստծուն, չպարփակեց ինքն իր մէջ եւ ի վերուստ իրեն տրուած շնորհքն ու կարողութիւնը մատուցեց ուրիշներին, բացեց արուեստի կինօաշխարհին եւ իր էութիւնից ու ժամանակից տուեց ինչ որ կարող էր, յարգանք վայելեց, հայութեան անունը բարձր պահեց ու այսօր եւ դեռ երկար տարիներ նրա անունը կը յիշուի կինօաշխարհի եւ Իրանի մէջ, որի փաստն է յուղարկաւորութեան արարողութեանը եւ հրաժեշտի այս պահին ներկայ գտնուող բազմութիւնը, ինչը հաստատում է նաեւ այն խօսքը թէ՝ կեանքում ինչ որ տրւում է ուրիշին՝ այն է յաւերժականը եւ աւելի քաղցրացած վերադառնում մարդուն:

Թեմակալ առաջնորդն իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց պետական բարձրաստիճան պատասխանատուներին՝ արարողութեանը ներկայ լինելու համար եւ Ազգային իշխանութեան անունից ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալ Զաւէն Ղուկասեանի բոլոր հարազատներին ու բարեկամներին՝ այդ անդառնալի կորստի համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, եկեղեցու բակում ազգային իշխանութեան անունից հայերէն եւ պարսկերէն լեզուներով դամբանական խօսք ընթերցեց տկն. Քառոլին Դիլանչեանը, ով անդրադառնալով հանգուցեալի իւրայատկութիւններին՝ ասաց. «*Նրան կարելի է համարել մեր համայնքի դեսպանը կինոյի ոլորտում, ով մեծ ժառանգութիւն ստանալով իր արմատներից ու ծննդավայրից, այն արտացոլեց իր արւեստում դառնալով այդ հոգեմտաւոր արժէքների թարգմանը: Հենց դրա արդիւնքում ծնւեցին նրա փաստագրական ֆիլմերը՝ նւիրւած Ջուղայի անւանի նկարիչներին եւ Նոր Ջուղայի դպրոցներին: Զաւէնը ապրեց անանձնական կեանքով: Անչահախնդիր եւ անմնացորդ նւիրւեց իր աշխատանքին, սիրտ ու հոգի ներդնելով իր ամբողջ գործերում: Քննադատութիւնների մէջ եղաւ անաչառ ու ազնիւ, աշխատանքում գործունեայ եւ էներգիայով լեցուն, իսկ բնաւորութեամբ ջերմ ու սիրալիր: Մինչեւ իր կեանքի վերջին պահերը չկորցրեց իւրայատուկ իր լաւատեսութիւնը, որով նա երկար տարիներ լոյս ու հաւատ էր ներշնչել բոլորին*»:

Յաջորդիւ արտայայտւեցին հանգուցեալի մօտիկ գործակիցներից եւ նրա ուսանողներից մէկական անձ:

Յուղարկաւորութեան արարողութիւնից յետոյ, հանգուցեալ Զաւէն Ղուկասեանի դին տեղափոխւեց հայոց գերեզմանատուն, եւ բազմահազար ժողովրդի ներկայութեամբ ամփոփւեց իր ծնողների շիրիմների կողքին: Թաղման կարգը կատարեցին Թեմի քահանայից եւ դպրաց դասերը:

Հողը թեթեւ իջնի նրա աճիւնների վրայ...

# ԱՄԱՆՈՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



2015 թուականի յունուարի 1-ի առաջին պահերին՝ առաւօտեան ժամը 30 րոպէին, Ս. Ամենափրկչեան Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ հաւատաւոր հայորդիների ներկայութեամբ, թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի նախագահութեամբ, գերշ. Տ. Վարուժան արք. Հերկելեանի, հոգեւորականաց եւ դպրաց դասերի մասնակցութեամբ, գոհաբանական աղօթք մատուցւեց առ բարձրեալն Աստուած՝ Ամանորի առթիւ:



Առաջնորդ Սրբազան Հայրը գոհաբանական մաղթանքից յետոյ իր շնորհաւորանքի խօսքը փոխանցեց բարեպաշտ ժողովրդին, աշխարհին մաղթեց խաղաղութիւն եւ անդորրութիւն: Թեմի զաւակների համար Աստծուց հայցեց բարի եւ իղձերի իրականացման տարի: Գերշ. Սրբազան Հայրը Նոր Տարւայ առաջին պահերը Տիրոջ տան մէջ անցկացնելը գեղեցիկ եւ գնահատելի երեւոյթ համարեց, յիշեց բոլոր ննջեցեալներին, հիւանդներին, տկարներին, աղքատներին ու անկեալներին, որպէսզի Աստուած նրանց արքայութիւն, առողջութիւն եւ վերականգնում շնորհի:

***

Յունուարի 1-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի առթիւ եպիսկոպոսական Ս. Պատարագ մատուցւեց Ս.Ա. Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում: Պատարագիչն էր թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, որին սպասարկում էին արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը եւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը: Արարողութեանը ներկայ եղան նաեւ գերշ. Տ. Վարուժան արք. Հերկելեանը, հոգեւորականաց դասը, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Գերշ. Սրբազան Հայրը Ս. Պատարագի ընթացքում քարոզի պահին շեշտելով, որ 2015 թուականը իւրայատուկ է լինելու հայ ժողովրդի համար ասաց. «2015 *Նոր Տարին մի ուրիշ տարի է լինելու համայն հայութեան համար. հարիւր տարուայ անցեալի մեր պատմութեան հաշուեյարդարն ենք կատարելու։ 2015 Նոր Տարին լինելու է իւրաքանչիւր հայի համար զգօնութեան, արթնութեան, ինքնութեան պահպանման, յիշեցման եւ մանաւանդ պահանջատիրութեան տարի… Անցնող հարիւր տարիների ընթացքում մենք չմոռացանք մեր նահատակներին, յիշեցինք եւ միաժամանակ յիշեցրինք աշխարհին, որ մենք բռնաբարուած իրաւունքներ ունենք։ Պահանջեցինք ու տակաւին հարիւր տարի յետոյ, շարունակում ենք մեր պահանջատիրական պայքարը… Հարիւր տարի յետոյ՝ այսօր, պէտք ունենք ա-*

*ւելի զգօն լինելու, աւե՛լի արթուն լինելու, ըստ այնմ՝ վերանորոգելու մեր յանձնառութիւնը եւ շարունակելու մեր պահանջատիրական պայքարը։ Հարիւր տարի անց, ազգովին վրէժխնդիր ենք լինելու, մինչեւ որ արդարութիւնը մեզ այցելի, ինչպէս Եսայի մարգարէն ասում է. «Նրա գերեզմանի համար՝ չարութեան, իսկ Նրա մահւան համար մեծամեծ հարւածներով պիտի վրէժխնդիր լինեմ, որովհետեւ Նա անօրէնութիւն չգործեց… » (Ես* 53.9)»:



Ս. Պատարագի ընթացքում տարւայ առաջին Ս. Հաղորդութիւնն ստացան ներկայ հաւատացեալները, իսկ արարողութիւնից յետոյ, Ս.Ա. Վանքի դահլիճում Առաջնորդ Սրբազան Հայրն ընդունեց Ամանորեայ շնորհաւորանքներ: Այնտեղ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբն իր ամանորեայ շնորհաւորանքն ընթերցեց, որի մէջ գրւած էր. «*Թող վերանան աշխարհի բոլոր արհաւիրքները եւ խաղաղութեան աղաւնին թեւածի ամբողջ աշխարհում։ Քաջառողջութիւն ենք մաղթում ազգային-հասարակական գործիչներին, նրանց նորանոր ձեռքբերումներ, իրագործումներ եւ համբերութիւն ենք մաղթում իրենց ազգանւէր գործում*»: Ապա արտայայտւեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը՝ ասելով. «2014 *թւականին ունեցել ենք ձեռքբերումներ եւ բացթողումներ։ Ձեռքբերումներից գլխաւորները կարելի է համարել Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու հիմնադրութեան* 350-*ամեակի նշման ծրագրերի պատշաճ կազմկերպումը, եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա չնորհազարդ Վեհափառ Հայրապետի յատուկ կոնդակով Թեմակալ առաջնորդ Սրբազան Հօրը «Արքութեան» տիտղոսի չնորհումը*»: Պրն. Մինասեանն անդրադառնալով 2015 թւականին՝ աւելացրեց. «2015 թւականին բազմաթիւ անելիքներ կան, որոնցից հիմնականը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումներն են: Այս կապակցութեամբ բոլորս պարտաւոր ենք պատասխանատու կեցւածքով եւ միակամ յանձնառութեամբ աշխատանքի լծւել եւ ցանկալի արդիւնքներ ապահովել»:



Գերշ. Սրբազան Հայրը, մէկ անգամ եւս իր շնորհաւորանքները փոխանցեց ներկաներին, բոլորի համար մաղթեց յաջողութիւններով լի տարի: Նա եւս անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին՝ ասաց. «*Զգօն եւ պատասխանատու կեցւածք պէտք է ցուցաբերել այս կապակցութեամբ եւ անհրաժեշտ է վերանորոգ կամքով պայքարել՝ արդարութեան վերականգնման համար*»: Թեմակալ առաջնորդը համայնքի բոլոր անդամներին արեւշատութիւն եւ առողջութիւն մաղթեց, եւ ուժ, կորով, աշխուժ կեանք, բարի ու արդիւնաւէտ գործունէութիւն ցանկացաւ ազգային, կրօնական, կրթական, մշակութային, հասարակական եւ բոլոր ասպարէզներում:



Վերջում ներկաները միասնաբար կատարեցին «Կիլիկիա» երգը եւ ապա շնորհաւորանքներ փոխանցեցին Առաջնորդ Սրբազան Հօրը, հոգեւորականաց դասին եւ ազգային իշխանութեանը:

Տարւայ առաջին օրը, հաւատացեալներն աղօթքով եւ Աստծուն գոհութիւն մատուցելով սկսեցին ուրախութեամբ, սրտի եւ հոգու բաւարարութեամբ, յոյս ունենալով, որ գալիք տարին Աստծու օգնականութեամբ լինելու է խաղաղութեան տարի:

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



Երկուշաբթի՝ յունուարի 5-ի երեկոյեան ժամը 5-ին, թեմի հայոց եկեղեցիներում զանգերի ղօղանջի ներքոյ սկսուեց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների նախատօնակի՝ Ճրագալոյցի Ս. պատարագի արարողութիւնը: Նոր Ջուղայի Ս. Յովհաննու, Ս. Ստեփանոս, Ս. Ներսէս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներում քահանայ հայրերը եկեղեցական արարողութեան ընդմիջից աւետեցին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան լուրը:

Ս. Յովհաննու եկեղեցում Ս. պատարագի արարողութիւնը նախագահեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը: Ս. Պատարագը մատուցեց արժ. Տ. Վազգէն քհն. Քէօշկէրեանը, իսկ երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի:



Յընթացս Ս. եւ անմահ Պատարագի, թեմակալ առաջնորդն ընթերցեց Ս. Ծննդեան տօնի առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը, որի մէջ շնորհազարդ Հայրապետը բնաբան ունենալով աւետարանական «*Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել*» համարը, խօսել էր Քրիստոսի ծնունդի, անցեալում եւ ներկայ ժամանակներում հայ ժողովրդի դիմագրաւած դժւարութիւնների մասին, նաեւ անդրադարձել էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:



Ս. Պատարագի աւարտին, ներկայ հաւատացեալները լսելով Քրիստոսի Ս. Ծնունդը աւետող շարականի «*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*» բառերը, մոմեր եւ լապտերներ վառեցին եկեղեցու Ս. Սեղանի լոյսից եւ տուն շտապեցին՝ իրենց ընտանիքի անդամների եւ հարազատների հետ միասին ուրախանալու աշխարհի Լոյսի՝ Յիսուս Քրիստոսի փրկարար ծնունդի տօնին:

Յաջորդ օրը, երեքշաբթի՝ յունուարի 6-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Նոր Ջուղայի Ս. Բեթղեհէմ, Ս. Մինաս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում հանդիսաւոր կերպով հոգեւոր հայրերի միջոցով մատուցւեց Ս. Պատարագ: Ս. Բեթղեհէմ եկեղեցում եպիսկոպոսական Պատարագ մատուցեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը: Քարոզի պահին, բազմաթիւ հաւատաւոր հայորդիներին իր հայրական խօսքը փոխանցեց պատարագիչ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով Յիսուս Քրիստոսի մարդեղացման խորհրդին ապա Հայոց ցեղասպանութեանը եւ այս օրերին աշխարհում տիրող չարութեամբ, ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ լեցուն գործողութիւններին, եւ իր պատգամն

աւարտեց հետեւեալ բառերով. «*Այսօր մարդկութիւնը մէկ անելիք ունի՝ իր հայեացքը դարձնել դէպի Բեթղեհէմ՝ արդարութիւնն ու խաղաղութիւնը վերահաստատելու, իր հայեացքը դարձնել դէպի Գողգոթա՝ լսելու Փրկչի ձայնը՝ «Ես յաղթեցի աշխարհին», իր հայեացքը դարձնել դէպի Ս. Յարութեան տաճար, յարուցեալ Քրիստոսի հետ մաքրուելու եւ վերածնուելու*»:



Ս. Պատարագից յետոյ տեղի ունեցաւ Ջրօրհնէքի հոգեպարար եւ սպասուած արարողութիւնը: Ս. Հոգին խորհրդանշող աղաւնին շուքով եւ թափօրով շրջեց հաւատաւոր ժողովրդի մէջ եւ եկեղեցու Ս. Խորան տարուելով, աղօթքների եւ շարականների հնչման ներքոյ առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ Ս. Միւռոնի հեղումով օրհնուեց եւ սրբագործուեց ջուրը, որը բաժանուեց համբերութեամբ սպասող հաւատացեալներին, ովքեր արարողութեան միջոցով հաղորդ դառնալով Քրիստոսի Ս. Մկրտութեանն ու Աստուածայայտնութեանը, միւռոնալից ջուրն իբրեւ օրհնութիւն, բժշկութիւն եւ աստուածային պարգեւ ըմպեցին եւ տուն տարան՝ Ս. Հոգու շնորհներով հարստացնելու եւ ողողելու իրենց բնակարանները:

Նոյն օրը, կէսօրից յետոյ, Ջրօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Նոր Ջուղայի Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում, իսկ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի նախագահութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ երեկոյեան ժամը 5:30-ին, Ջրօրհնէքի կարգ կատարուեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկչեան վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, որից յետոյ, առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում Սրբազան Հայրն ընդունեց Ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհաւորանքները:

Բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ:

## Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբաթ եւ շաբաթ՝ յունուարի 30-ին եւ 31-ին, երկօրեայ արարողութիւններ տեղի ունեցան Ս. Սարգիս Զօրավարի տօնի առթիւ՝ Նոր Ջուղայի Ս. Սարգիս եկեղեցում, որը նաեւ նոյն եկեղեցու անուանակոչութեան տօնն էր:



Տօնի առթիւ Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում կատարուեցին մատաղի զենման եւ հարիսայի պատրաստման ամենամեայ աշխատանքները, բազմաթիւ հաւատացեալ ժողովրդի մասնակցութեամբ:



Ուրբաթ՝ յունուարի 30-ի կէսօրից յետոյ ժամը 3:00-ին, Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ քահանայ հայրերի մասնակ-

ցութեամբ կատարուեց աղօրհնէք, այնուհետեւ տեղի ունեցաւ ոչխարների զենում: Նոյն օրը` երեկոյեան ժամը 6:00-ին, կատարուեց Հսկումի արարողութիւն:



Շաբաթ` յունուարի 31-ի առաւօտեան, Ս. Սարգիս եկեղեցում եւ շրջափակում ի մի եկած մեծաթիւ հաւատացեալների ներկայութեամբ եւ մասնակցութեամբ, ժամը 10:00-ին սկսուեց Ս. Պատարագի հոգեպարար արարողութիւնը, որը մատուցեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ: Ուխտաւոր հաւատացեալների շարքում արարողութեանը ներկայ էին նաեւ հոգեւորականաց եւ դպրաց դասերն ու ազգային մարմինների անդամները: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը` ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Յընթացս սուրբ եւ անմահ Պատարագի յաւուր պատշաճի քարոզեց հոգշ. Հայր Սուրբը: Նա իր խօսքում անդրադառնալով առհասարակ սուրբերի եւ մասնաւորապէս Ս. Սարգիս զօրավարի կեանքի ու վարքի օրինակին եւ նրանց գործունէութեան կարեւորութեանը` հաւատացեալներին յորդորեց առաւել ամրապնդել իրենց հաւատի մէջ եւ վարել ճշմարիտ քրիստոնէական վայել կեանք, շեշտելով, որ սուրբերը ամենօրեայ ներկայութիւն պէտք է լինեն Յիսուս Քրիստոսին հաւատացող եւ հետեւող անձանց կեանքում, այլապէս, տարին մէկ անգամ սուրբերի տօնը նշելը կը դառնայ ձեւական եւ արժէքից զուրկ արարք:

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն իր պատգամի աւարտին շնորհաւորելով բոլոր այն անձանց, որոնց անուան տօնն էր, գնահատանքի խօսք ուղղեց Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեանը, Կանանց ու Մատաղի յանձնախմբերին եւ բոլոր հաւատացեալներին, ովքեր իրենց նիւթա-բարոյական աջակցութիւնը բերեցին` տօնին առնչող աշխատանքների կազմակերպման ու պատշաճ իրականացման համար եւ իրենց զօրակցութեամբ ու ներկայութեամբ պայծառացրին եկեղեցին:



Ս. Պատարագի արարողութիւնից յետոյ, հոգեւորականաց դասը Ս. Խորան բարձրացաւ եւ Ս. Սարգիս Զօրավարի աջ-մասունքով կատարեց Ջրօրհնէքի արարողութիւն. օրհնուած ջուրը բաժանուեց ներկայ հաւատացեալներին` իբրեւ օրհնութեան եւ հաւատի զօրացման, հիւանդութիւնների բուժման եւ դժուարութիւնների փարատման միջոց:



Այնուհետեւ եկեղեցու բակում տեղի ունեցաւ Մատաղօրհնէք. պատրաստուած հարիսայից բաժին ստացան բոլոր ներկաները եւ Ս. Սարգիս զօրավարի տօնի խորհրդին հաղորդ դառնալով, մեծ սուրբի բարեխօսութիւնը խնդրեցին իրենց աղօթքներում:

# ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Երեքշաբթի՝ 2015 թւականի փետրուարի 10-ին, սրբոց Ղեւոնդեանց՝ քահանայութեան եւ քահանաների տօնին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցւեց Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի: Պատարագիչն էր Ծահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ամբողջ թւով ներկայ էր Սպահանի հայոց թեմի քահանայից դասը եւ զգեստաւորւած հետեւում արարողութեանը:



Պատարագիչ Հայր Սուրբը, օրւայ պատշաճ իր քարոզի ընթացքում, բնաբան ունենալով՝ «*Մի՛ վախենաք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք վախեցէ՛ք մանաւանդ Նրանից, որ կարող է թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորստեան մատնել դժոխքում*» (Մտ 10.28) աւետարանական հատւածը, անդրադարձաւ Ղեւոնդեանց քահանաների ամուր հաւատին ու քաջութեանը եւ շեշտեց, որ ճշմարիտ եւ արժանի հոգեւորականն այն է, ով օրինակ առնելով Ղեւոնդեանց անունով պսակւած հոգեւորականներից, միայն Աստծու երկիւղն ունենայ իր սրտում եւ անվարան, աննասան ու քաջ կերպով պաշտպանը լինի աստւածային ճշմարտութիւններին ու քրիստոնէական հաւատին: Հոգշ. Հայր Սուրբը շնորհաւորելով քահանաներին իրենց տօնի առիթով, իր խօսքը շարունակեց՝ ասելով, որ հոգեւորականը զօրաւոր է, երբ իր հետ ունի իր ժողովրդի աջակցութիւնը, սէրն ու համամտութիւնը:



Ս. Պատարագի աւարտին Հոգեհանգստեան արարողութիւն կատարւեց Ս. Յովհաննու եկեղեցում ծառայած բոլոր ննջեցեալ քահանայ հայրերի հոգիների խաղաղութեան համար, ապա ներկայ հաւատացեալները հոգեւորականաց դասին փոխանցեցին իրենց շնորհաւորանքն ու բարեմաղթանքները:




Արարողութիւնից յետոյ, եկեղեցու սրահում, Հայոց եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ծրագրի հաղորդավար օրդ. Անուշ Յովհաննիսեանը մէջընդմէջ եկեղեցու Հայրերի խօսքերից եւ Ս. Աւետարանից խրատական բաժիններ ընթերցեց՝ ուղղւած հոգեւորականներին: Ընթացքում «Մատեան Ողբերգութեան» գրքից աղօթք ընթերցւեց, դպրաց դասի անդամների միջոցով երգեր ձօնւեցին հոգեւորականներին, սրտի խօսքեր ու շնորհաւորանքներ ասացին Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը, Եկեղեցեաց վարչութեան անդամ Ֆրիդա Ալլահվերդեանը: Հոգեւորականաց դասի անունից շնորհակալութիւն յայտնեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորական եւ շնորհակալական խօսքերով եզրափակեց հանդիսութիւնը՝ շեշտելով, որ Հայ եկեղեցին, իբրեւ ազգային եկեղեցի, հայոց պատմութեան ամենատարբեր շրջաններում միշտ եղել է հայ ժողովրդի կողքին եւ հրապարակի վրայ՝ ծառայելու եւ առաջնորդելու նրան: Թեմակալ առաջնորդն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, յորդորեց, որ նոյն միասնական ոգով ու յանձնառութեամբ բոլորը պէտք է աշխատեն ըստ արժանւոյն նշելու ամեակը:

Հիւրասիրութեան աւարտին, Եկեղեցեաց վարչութեան կողմից յուշանւէրներ յանձնւեցին հոգեւոր հայրերին:

# ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Հինգշաբթի՝ փետրուարի 12-ի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի Ս. «Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում սուրբ եւ անմահ պատարագ մատուցւեց Վարդանանց հերոսամարտի նահատակների յիշատակին, ձեռամբ Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի: Արարողութեան ընթացքում շարականների երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Ս. պատարագին ներկայ էին նաեւ թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնն ու պատասխանատուները եւ հաւատացեալ ժողովուրդ:



Պատարագիչ քահանայ հայրն իր քարոզում անդրադառնալով Վարդանանց պատերազմին, այդ իրադարձութիւնը հայ ժողովրդի համար ճակատագրական համարեց եւ ասաց. «*Վարդան Զօրավարն իր կողքին ունենալով հայ եկեղեցու հոգեւորականաց դասին, իր կտրիճ զինուորների հետ միասնաբար ուխտեց հաւատարիմ մնալ ազգի եւ կրօնի հանդէպ: Նրանք պայքարեցին, արիւն թափեցին ու նահատակւեցին, սակայն հասան իրենց նպատակին եւ պահեցին իրենց հայ ազգութիւնը, պահեցին իրենց քրիստոնէական կրօնն ու հաւատը եւ հաւատարիմ մնացին իրենց սկզբունքին*»:

Արարողութեան աւարտին տօնին նիւրւած աշակերտական գեղարւեստական ծրագիր կայացաւ վանքի շրջափակում, ուր Նոր Ջուղայի հայոց ազգային նա-



խակրթարանի սաները եւ «Արմէն» կրթահամալիրի ու «Քանանեան» աղջ. եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիները առանձնաբար հանդէս եկան անհատական եւ խմբական երգերով, ասմունքներով ու խօսքերով՝ ուխտելով, որ Վարդանանց խիզախ մարտիկների յիշատակը վառ են պահելու եւ հաւատարիմ են մնալու նրանց անմահ կտակին:



Աշակերտական ծրագրի հաղորդավարութիւնը կատարեց «Քանանեան» դպրոցի աշակերտուհի Ծաղիկ Մատթէոսեանը:



Օրւայ եզրափակիչ խօսքն արտայայտեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, ով գնահատելով աշակերտական ելոյթները նրանց պատգամեց, որ տարւայ իւրաքանչիւր օր յիշեն Վարդանանց պատերազմի ոգին, քանի որ դա ազատատենչութեան, հաւատի եւ հայրենասիրութեան ոգի է:

## î º ² è ÜÀÜ ¸ ² è ²æÆ Ü ² Ê ² î úÜ ² ÎÀÐ ² Ü ¸ Æêàô º ² Ø´ Ü Þ ô º ò Üàð æàôÔ ²Úàô Ø

Ուրբաթ՝ փետրուարի 13-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի, տեղի ունեցաւ Տեառնընդառաջի նախատօնակը եւ աւանդական հրավառութիւն՝ եկեղեցու շրջափակում: Երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Համիկ Ալեքսանդրեանի:



Արարողութեան ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը, ով սկզբում անդրադարձաւ փրկչի՝ Քրիստոսի աշխարհ գալուն եւ տաճար ընծայմանը: Նա իր խօսքի երկրորդ բաժնում կարեւորութեամբ նշելով, որ Յիսուս Քրիստոսն ամենօրեայ ներկայութիւն ունի բոլորիս կեանքում՝ յորդորեց քայլել դէպի Քրիստոսի լոյսը տանող ճամբով, անգամ եթէ դա լինի դժւար, քարքարոտ ու վերիվայրումներով լի ճանապարհ:



Արարողութեան աւարտին տեղի ունեցաւ նորածինների տաճար ընծայման կարգը, ապա աւանդական հրավառութիւն:

Յատկանշելի է, որ Տեառնընդառաջի նախատօնակը պատշաճ արարողութեամբ եւ աւանդական հրավառութեամբ նշւեց նաեւ Նոր Ջուղայի Ս. Մինաս, Ս. Յովհաննու եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում:

Եկեղեցիներում կատարւող արարողութիւններից յետոյ, նոյն օրը ժամը 7-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան, տեղի ունեցաւ հրավառութիւն եւ խրախճանք:



Խարոյկը միասնաբար բոցավառեցին թեմակալ առաջնորդն ու անցնող տարուայ բոլոր նորապսակ զոյգերը: Այնուհետեւ բակում Արթին Ղարախանեանի ուրախ երգերի կատարմամբ տօնական մթնոլորտը շարունակւեց, իսկ միութեան սրահում տեղի ունեցաւ ամենամեայ միջոցառումը, որտեղ նորածիններն ու նրանց ծնողները եւ նորապսակ զոյգերը հանդիպեցին առաջնորդ Սրբազան Հօր եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ: Ծրագրին ներկայ էին նաեւ քահանայից դասը, Կրօնական ու Թեմական խորհուրդների եւ շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչներն ու Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամները:



Սոյն միջոցառումը բացւած յայտարարեց հանդիսավար Մանիա Ղուկասեանի մաղթանքներով ու ողջոյնի խօսքով: Այնուհետեւ յանուն Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեան ելոյթ ունեցաւ մարմնի ատենադպիր Ֆրիդա Ալլահվերդեանը, ով շնորհաւորելով տօնի կապակցութեամբ, բոլոր նորապսակներին, նորածիններին եւ նրանց ծնողներին մաղթեց առողջութիւն եւ յաջողութիւն:



Թեմի Կրօնական խորհրդի անունից արտայայտուեց խորհրդի ատենապետ Արշալոյս Խուդավերդեանը: Նա իր պատգամը փոխանցեց ներկայացնելով Մեծն Կիւրոսի եւ Երուանդ թագաւորի միջեւ տեղի ունեցած մի միջադէպ, որտեղ կարեւորւում էր հայ ընտանիքում ամուսնու եւ կնոջ դերը: Նա վերջում նոյնպէս բոլոր ներկաներին մաղթեց առողջութիւն ու երջանկութիւն:



Ծրագրի շարունակութեան մէջ հրաւիրեալները թեմակալ առաջնորդի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ լուսանկարուելուց յետոյ, նախ նորածինների ծնողները միասնաբար, ապա նորապսակ զոյգերը հատեցին իրենց համար նախատեսուած տորթերը:

Նորածինների ծնողների անունից շնորհակալական խօսքով ու բարեմաղթանքներով հանդէս եկան Վաչիկ Հայրապետեանը, Թովմա Գալստանեանը եւ Գայիանէ Սարգսեանը, իսկ նորապսակների կողմից՝ Արփինէ Պօղոսեանը:

Երեկոյի վերջին բաժնում, ձեռամբ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ Կրօնական խորհրդի ատենապետ Արշալոյս Խուդավերդեանի, յուշանուէրներ շնորհուեցին փոքրիկներին եւ նորապսակներին, որից յետոյ իր հայրական օրհնանքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Թեմակալ առաջնորդն սկզբում իր խօսքն ուղղելով նորապսակներին նրանց թելադրեց փոխադարձ սիրով ու հաւատարմութեամբ անաղարտ պահել իրենց ընտանեկան օջախը: Այնուհետեւ նա իր ուրախութիւնը յայտնելով անցնող տարուայ ընթացքում թեմում 33 նորածիններ լոյս աշխարհ գալու կապակցութեամբ՝ դիմելով ծնողներին աւելացրեց, որ ճիշտ է ասում են, թէ որակն է կարեւոր եւ ոչ քանակը, սակայն առանց քանակի նաեւ որակ չի լինելու: Թեմակալ առաջնորդն իր պատգամն աւարտեց ներկաներին յորդորելով՝ զաւակներ ունենալ եւ բազմացնել հայ ժողովրդի քանակը:



# Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ՏԱԹԵՒ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Ուրբաթ՝ փետրուարի 27-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, տեղի ունեցաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի տարեկան համերգը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ազգային մարմինների, Հայ դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներն ու հոծ թւով ժողովուրդ:



«Տաթեւ» երգչախումբն իր գործունէութեան 15 տարիների ընթացքում ղեկավարութեամբ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի, տարբեր առիթներին նուիրուած ձեռնարկներով, ինչու չէ նաեւ տարեկան համերգներով, հայկական եւ արեւմտա-եւրոպական բազմաթիւ երգերի կատարմամբ, հանդիսատեսին է մատուցել լաւագոյն երգարուեստը, իսկ այս անգամ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ, երգչախմբի կատարմամբ բեմից հնչեցին Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններից ընտրուած հայկական ժողովրդական երգեր, որոնք հայաշունչ, յուզական ու մեղեդային լինելուց բացի մեծ հարստութիւն են համարւում հայ ժողովրդի համար:

Երգերի գործիքաւորումը կատարուել էր երգչախմբի ղեկավարի միջոցով:

Ծրագիրը բացւած յայտարարուեց Վեհանուշ Խուդաբախշեանի խօսքով, որտեղ նա անդրադառնալով համերգում ներկայացուելիք երգերին՝ ասաց. «*Այդպիսի երգեր յօրինել կարող էր միայն խաղաղ եւ ստեղծարար ժողովուրդ: Ափսոս, որ 1915 թւականի արիւնալի դէպքերից յետոյ ընդմիշտ ընդհատուեց այդ խաղաղասէր ու ստեղծագործ ժողովրդի ապրելու եւ ստեղծագործելու հնարաւորութիւնը: ...Այս երգերի ներկայացմամբ երգչախումբս նպատակ ունի ընդմիշտ վառ պահելու մեր կորած հայրենիքի ու հարազատ ժողովրդի անմոռաց յիշատակը*»:




Երգչախումբը համերգի ընթացքում հերթաբար ներկայացրեց՝ Ակնայ շրջանից՝ «Վերէն ի վար», «Ուստի կու գաս», Կեսարիայից՝ «Օխ նանա», «Էրթանք մըր էրգիր», Տարօնից՝ «Պապիկ, մամիկ, կարգէք զիս», «Ծուշօ», Տիգրանակերտից՝ «Օյ զանըմ», «Էս գիշեր Համբարձում է», «Պարջան իջի խորոզ է», Նոր Նախիջեւանից՝ «Սիրոյ երգ», «Գովք հարսնացուի», Բութանիայից՝ «Արտ մը ունիմ» եւ Վան-Վասպուրականից՝ «Պապի, լուսոյ աստղ երեւաց», «Ծախրայ մանող», «Բոստան են տըրէ», «Մոկաց շուկէն», «Ջանիման» եւ «Մաքրուհի» երգերը:

Յատկանշական է, որ երգերի կատարումներն ընդմիջւում էին Ալինա Ալեքսանդրեանի խօսքերով, ով պաստառի վրայ ցուցադրուող համահունչ պատկերների հետ զուգընթաց բացատրութեամբ էր հանդէս գալիս ներկայացուելիք երգերի ծննդավայրերին առնչւող պատմութեան, յայտնի կոթողների եւ երգ-երաժշտութեան արւեստի մասին: Սոյն նիւթերը կազմել էր Հերմինէ Բաբայեանը:

Ծրագիրն աւարտուեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի հայրական օրհնանքով, ով գնահատելով մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի մտայղացումը՝ համերգը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրելու եւ ցեղասպանութեան ենթարկւած շրջանների ժողովրդական երգերը ներկայացնելու համար, աւելացրեց. «*Այս երգերն ապացուցում են, որ թէեւ թշնամին կարող է մեր մարմինն սպանել, կարող է մեր եկեղեցիները մզկիթի վերածել, կարող է մեր ամրոցները, բերդերը եւ գեղեցիկ դաշտերը քանդել ու աւերել, սակայն չի կարող մեր հոգին ջնջել եւ մեր ինքնութիւնը խաթարել: Այսպիսի երգեր մեռած չեն, ապրում են ու ապրեցնում մեր ողջ ժողովրդին*»:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՒԱԾ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՅԹ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒՄ



Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի պատասխանատուները աշակերտութեանը հայեցի դաստիարակութիւն տալու եւ համահայկական հարցերին առաւել հաղորդ դարձնելու նպատակով կազմակերպւող ծրագրերի շարանում, այս անգամ հինգշաբթի՝ փետրուարի 5-ի երեկոյեան ժամը 5-ին, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհիների մասնակցութեամբ կազմակերպել էին հայրենագիտական մրցոյթ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, որի միջոցով մեկնարկը տրուեց դպրոցի կողմից այս առիթին նուիրուած միջոցառումների: Մրցոյթը հովանաւորւել էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման Սպահանի հայոց թեմի կենտրոնական յանձնախմբի կողմից:

Ծրագրին որպէս հանդիսատես ներկայ էին Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի ներկայացուցիչ Արմինէ Սիմոնեանը, նոյն յանձնախմբի Մշակութային միջոցառումների կազմակերպիչ ենթայանձնախմբի ներկայացուցիչ Ադրինէ Ստեփանեանը, դպրոցի ուսուցչուհիները, ծնողները, աշակերտուհիները եւ մի շարք այլ հիւրեր:

Հայրենագիտական թեմայով այս միջոցառումը, որը կազմակերպւել էր հայերէն առարկաների ուսուցչուհի Սեդա Դիլանչեանի նախաձեռնութեամբ եւ դպրոցի պատասխանատուների համագործակցութեամբ, բացւած յայտարարւեց փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանի արտայայտութիւններով, ով բարիգալուստ մաղթեց ներկաներին եւ բնաբան ունենալով Պարոյր Սեւակի «Ազգերը պահպանւում են հողով ու լեզւով եւ աւելի շատ լեզւով» խօսքը, կարեւորութեամբ ասաց. «Խօսքն է պահում համայնքները եւ դպրոցն աշխատանքներ է ծրագրում խօսքի զարգացման ուղղութեամբ»:

Այնուհետեւ մեկնարկեց հայրենագիտական մրցոյթը, ուր բուռն եւ հաճելի մրցակցութիւն ընթացաւ մասնակիցների՝ «Արամ Մանուկեան», «Անի», «Ղօղանջ» եւ «Յովհաննէս Այվազովսկի» խմբերի միջեւ, իսկ որպէս իրաւարարներ աշակերտների պատասխանները գնահատեցին՝ փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը, ուսուցչուհիներ՝ Սեդա Դիլանչեանն ու Քառոլին Դիլանչեանը եւ դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը:

Հարցերը հիմնականում ընտրւել էին հայոց պատմութիւնից, հայ մշակոյթի պատմութիւնից ու հայոց լեզւից, եւ իւրաքանչիւր ճիշտ պատասխանի արդիւնքում էկրանի վրայ ցուցադրւում էր մրցոյթի պատգամնախադասութեան՝ «Յիշում եմ եւ պահանջում»-ի, մէկ հնչիւնը: Խելացի եւ պահանջատէր աշակերտները բաւականին կարճ ժամանակահատւածում կարողացան կռահել այդ իմաստալից պատգամը:

Առաջին փուլի աւարտին առաւելագոյն նիշ ստացած «Արամ Մանուկեան»-ը եւ «Ղօղանջ»-ը դուրս եկան եզրափակիչ փուլ, որտեղ դարձեալ թէժ մրցակցութիւն ընթացաւ եւ երկու խմբերն ստացան հաւասար նիշեր, իսկ յաղթողին ճանաչելու համար՝ իրաւարար կազմը հնչեցրեց երեք լրացուցիչ հարցեր եւ արդիւնքում «Ղօղանջ» խումբն իրեն առաւել լաւ դրսեւորելով, յաջողեց զբաղեցնել մրցոյթի առաջին պատւաւոր տեղը:

Վերջում Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական յանձնախմբի կողմից գնահատագրերի արժանացան բոլոր մասնակիցները, իսկ մրցանակներ նուիրեցին առաջին եւ երկրորդ հանդիսացած խմբերի անդամներին: Աշակերտների պարգեւատրման արարողութեան աւարտին «Քանանեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի կողմից, աշխատասիրութեան եւ նուիրւածութեան, ինչու չէ նաեւ արտադասարանային բազում աշխատանքների կազմակերպման համար գնահատւեց ուսուցչուհի Սեդա Դիլանչեանը:

# ԻՍԼ. ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ԹԽՈՒԱԾՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՐՑՈՅԹ

Իրանի իսլ. յեղափոխութեան յաղթանակի 36-րդ տարեդարձին նուիրուած ծրագրերի շարանում, ազգային աւանդոյթների պահպանման նպատակով, Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի տնօրինութեան եւ անձնակազմի համատեղ նախաձեռնութեամբ, շաբաթ՝ փետրուարի 14-ի առաւօտեան ժամը 11-ին, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում կազմակերպուել էր թխուածքների եւ հայկական աւանդական ճաշատեսակների մրցոյթ՝ աշակերտների ծնողների մասնակցութեամբ: Որպէս հանդիսատես սրահում ներկայ էին դպրոցի ուսուցչուհիներն ու աշակերտուհիները:



Միջոցառումը բացուած յայտարարեց գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանի ողջոյնի խօսքով, որից յետոյ նա կարեւորութեամբ նշեց, որ մրցոյթի կազմակերպման նպատակներն են եղել՝ հայկական աւանդոյթների պահպանումը, դրանց ծանօթացումը նոր սերնդին եւ առողջ սննդի օգտագործման մշակոյթի տարածումը:



Ծրագրին մասնակցել էին թւով 35 մայրեր եւ նրանց պատրաստած ճաշերի ու թխուածքների ախորժալի տեսքն ու ձեւաւորումը, ինչու չէ նաեւ բուրմունքը, որը ողողել էր ամբողջ դահլիճը, ոչ միայն գրաւեցին հանդիսատեսի ուշադրութիւնը, այլեւ գրգռեցին նրա ախորժակը:

Մրցոյթի հայկական աւանդական ճաշատեսակների բաժնում ներկայացուել էին 20 ճաշեր, որոնց գնահատելու դժւարին աշխատանքը վստահուած էր Զեփիւռ Մարտիրոսեանին, Վարդուշ Զարգարեանին, Նւարդ Խաչեանին եւ Դիանա Կարապետեանին, իսկ թխուածքների բաժնում, ուր իրաւարարների դատին էին յանձնուել 15 կարկանդակներ, գնահատումը կատարեցին՝ «Անդոլս» հրուշակարանի սեփականատէր եւ տնօրէն Նաղմէ Եազդանին, Ժարմինէ Աղուրեանն ու Արսինէ Բաղումեանը: Աւանդական ճաշատեսակների շարանում յատկապէս ուշագրաւ էին՝ մախոխը, սպասը, ժռաթթուն, հարիսան, տոլման եւ փառինջով փլաւը:



Մինչեւ իրաւարար կազմի անդամները գնահատում էին ճաշատեսակներն ու թխուածքները, նկատի առնելով դրանց համն ու մատուցման եղանակը, սրահում ներկայ աշակերտներն առիթ ունեցան արտայայտելու իրենց տեսակէտներն ու առաջարկները, իսկ նրանցից ոմանք իրենց ուրախութիւնը յայտնեցին՝ դպրոցի աշխատանքներին իրենց ծնողներին հաղորդ եւ մասնակից դարձնելու կապակցութեամբ:

Մրցոյթն ընթացաւ ջերմ, մտերմիկ ու հաճելի մթնոլորտի ներքոյ եւ աւարտին իրաւարարների գնահատականների ամփոփումից յետոյ, աւանդական ճաշատեսակների բաժնում որպէս լաւագոյն պատրաստողներ պարգեւատրուեցին Արաքս Մինասեանն ու Ռիթա Միրզախանեանը, իսկ թխուածքների բաժնում՝ Լորեթա Մինասեանը եւ Հրանուշ Ծահնազարեանը: Յատկանշական է, որ Ժուլիեթ Ղազարեանի պատրաստած կարկանդակը արժանացաւ «Անդոլս» հրուշակարանի յատուկ մրցանակին:

# ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ՆՇՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի համար փետրուար ամիսն առանձնայատուկ նշանակութիւն ունի, քանի որ նրանց համատեղ ջանքերի շնորհիւ մի քանի օրերի ընթացքում տօնւում են հայ եկեղեցու եւ ազգային-աւանդական կարեւոր տօներից Վարդանանքը, Տեառնընդառաջը եւ Բուն Բարեկենդանը, որոնք պատեհ առիթ են հանդիսանում երեխաներին ազգային ու հոգեւոր արժէքներին ու տօներին առաւել ծանօթացնելու եւ հաճելի անակնկալներով լի միջոցառումներ կազմակերպելու համար:

êð´àò ì²ð¸²Ü²Ü²ò îúÜÀ

Այս տարի Սրբոց Վարդանանց տօնը դպրոցում նշուեց երեքշաբթի՝ փետրուարի 10-ի առաւօտեան:



Սկզբում հերոսամարտի պատմութիւնը դիւրին բացատրութեամբ երեխաներին մատուցեց դպրոցի Ծնողական խորհրդի անդամ Մանիֆա Խուդաբախշեանի միջոցով, ապա պատմութիւնից ոգեւորուած փոքրիկների խանդավառութիւնը բազմապատկուեց, երբ նրանց այցելեց զինազգեստ հագած «Վարդան Մամիկոնեանը», ով սաներին բացատրելով իր ռազմական զգեստների անուններն եւ օգտագործման եղանակի մասին, նրանց յորդորեց լինել արիասիրտ, լսել մեծերի խրատները եւ սիրել հայրենիքն ու հայ ժողովուրդը: «Վարդան Մամիկոնեանը» վերջում երեխաներին բաժանեց տօնին առնչուող նիւթերից ու խաղերից կազմուած գրքոյկներ, որոնք պատրաստուել էին դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի միջոցով:

îº²èÜÀÜ¸²è²æ

Տեառնընդառաջի տօնը նոյնպէս մեծ խանդավառութեան պատճառ հանդիսացաւ, քանի որ այն նշուեց քահանայ հօր այցելութեամբ եւ աւանդական թուփի հրավառութեամբ, շաբաթ՝ փետրուարի 14-ի առաւօտեան: Նախ դպրոցի բակում շրջան կազմած աշակերտներին եւ ուսուցիչներին միացան թաղի հոգեւոր հայրը՝ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը եւ բերշն. Ալբերտ կիսասարգաւակ Ղազարեանը:



Արժն. քահանայ հայրը ողջունելով բոլորին՝ մանուկներին բացատրեց օրուայ խորհրդի եւ սովորոյթների մասին, ապա ներկաներին հրաւիրեց միասնական «Տէրունական աղօթք» բարձրացնել առ Աստուած: Քիչ յետոյ բոցավառուեց դպրոցի բակում տեղակայուած, գունագեղ թղթերով զարդարուած աւանդական թուփը եւ բոլորը միմեանց ձեռքերը բռնած, շրջելով խարոյկի շուրջ երգեցին եւ ուրախացան:

Միջոցառման աւարտին բոլորը հիւրասիրուեցին համեղ հրուշակներով եւ մանուկները ուսուցչուհիների օգնութեամբ թռան խարոյկի վրայից:

´àôÜ ´²ðº Î º Ü¸²Ü

Բուն Բարեկենդանի տօնը հաճելի մթնոլորտի ներքոյ նշուեց մանկապարտէզ-նախակրթարանում կիրակի՝ փետրուարի 15-ի առաւօտեան:



Այս գեղեցիկ տօնի առթիւ բոլոր երեխաներն ընդունելով աճպարարի կերպար, կրում էին համապատասխան գլխարկներ եւ կախարդական փայտիկներ, որոնք պատրաստուել էին դպրոցի Ծնողական խորհրդի անդամների միջոցով: Աշակերտները մեծ խանդավառութեամբ, մէկը միւսին յաջորդելով, լուսանկարուեցին, ապա տօնը շարունակուեց առաւել զւարճալի մթնոլորտում, երբ երեխաներին միացան երկու չարաճճի ծաղրածուներ, ովքեր ջանք չխնայեցին մանուկներին ուրախացնելու եւ նրանց շուրթերին մանկական անկեղծ ժպիտ առաջացնելու համար:

Վերջում ծաղրածուների միջոցով աշակերտներին բաժանուեցին գեղեցիկ փաթեթաւորումներով աւանդական աղանձը:

## Üàð æàôÔ²ÚÆ Ð²Úàò ²¼¶. §ø²Ü²Üº²Ü¦ ¸äðàòÀ êä²Ð²ÜÆ ÎðÂ²-¸²êîÆ²ð²ÎâàôÂº²Ü ÐÆØÜ²ðÎÆ 3-ð¸ Þðæ²ÜÆ ´²êÎºî´àÈÆ ØðòàÚÂÆ ² Øðò²Ü²Î²ÎÆð

Ուրախութեամբ տեղեկացնում ենք, որ Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոցի բասկետբոլի խումբը Կրթադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի միջնակարգի միջդպրոցական մրցաշարում գրաւե լ է առաջին տեղը, իսկ խմբի անդամներից հինգը ընտրուել են Սպահան նահանգի միջդպրոցական հաւաքականի անդամ:

Մարզիչ ՝ Թալին Խաչատրեան

Մասնակիցներ՝

Նինէ Բարդի, Լուսիա Գալստան, Անիա Թորոսեան, Ալմարա Թահմազեան, Անիշա Խաչեան, Ռենիա Ծատուրեան, Մինելի Ղազարեան, Գայիանէ Մինասեան, Ռենիա Մինասեան, Լուսին Յովսէփեան, Մանէ Յովսէփեան, Արեգ Յարութիւնեան

Նահանգի միջդպրոցականի հաւաքականին մաս են կազմում՝

Մանէ Յովսէփեան, Անիշա Խաչեան, Արեգ Յարութիւնեան, Մինելի Ղազարեան, Անիա Թորոսեան



## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութիւնը միութեան գործունէութեան վերելքին աջակցող միութենականներին, պատասխանատուններին, աշխատակազմին եւ մնայուն ու ժամանակաւոր յանձնախմբերին գնահատելու եւ արժեւորելու նպատակով, չորեքշաբթի՝ փետրուարի 4-ին կազմակերպել էր հանդիսութիւն:



Ծրագրի մտերմիկ մթնոլորտում նախ միութեան Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը ներկայացրեց Կենտրոնական վարչութեան ծաւալած միամեայ գործունէութեան զեկոյցը: Ապա դարձեալ միամեայ գործունէութեան զեկոյցով հանդէս եկան Երէցների, Մշակութային, Սկաուտական եւ Ուսանողական միաւորների վարչութեան ներկայացուցիչները:



Միաւորների զեկոյցները հերթաբար ներկայացրեցին Հիլդա Ծառուկեանը, Քարմէն Ղեւեանը, մանիա Ղոկասեանը եւ Նարբէյ Ջարդն Դաւուդը:

Երեկոն շարունակեց խրախճանքով եւ ընդունելութեամբ:

# ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՆՇԻԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւորի նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ միաւորի անձնակազմի ու միութեան Մշակութային եւ Ուսանողական միաւորների, կիրակի՝ փետրուարի 15-ի երեկոյեան, միութեան մարզասրահում նշւեց հայկական աւանդական Բուն Բարեկենդանը:

Երէցների միաւորի անունից ներկաներին ողջունեց Սեդա Բարղեանը եւ անդրադարձաւ Բարեկենդան տօնի ծագումնաբանութեանը եւ նրան կապւող ծէսերին ու աւանդոյթներին, ապա Մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը Յակոբ Մարգարեանի ղեկավարութեամբ հանդէս եկաւ «Շիրակի» պարով, որից յետոյ մեծ թւով տարազաւորներ մասնակցեցին կերպարների ներկայացմանը: Ելոյթների աւարտին պարախումբը եւ տարազաւորները գնահատւեցին գնահատագրերով: Հանդիսութեան ընթացքում ներկաները վայելեցին Երէցների միաւորի պատրաստած աւանդական ճաշատեսակները, բարեկենդանին յատուկ կերպարներով քաղցրաւենիքներն ու այլ ուտեստները:

Նշելի է, որ միաւորը կազմակերպել էր դիմակների վաճառք, նաեւ նախատեսւել էր տեղի վրայ օրւան պատշաճ դիմայարդարման հնարաւորութիւն, որի համար իր համագործակցութիւնն էր բերել Ուսանողական միաւորը:



## ԶԵԿՈՅՑ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

### *Սպահանի «Բարեկեցութիւն» կազմակերպութեան ընդհանուր տնօրէնի այցելութիւնը*

Չորեքշաբթի՝ 2014 թուականի դեկտեմբերի 24-ի առաւօտեան ժամը 11-ին, Սպահանի «Բարեկեցութիւն» կազմակերպութեան ընդհանուր տնօրէն պրն. Սադեղին եւ պատասխանատուները, ընկերակցութեամբ Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանի, այցելեցին հայոց ազգային ծերանոց, ուր հանդիպելով տարեցներին՝ շնորհաւորանքներ փոխանցեցին Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ: Հանդիպմանն ներկայ էին նաեւ ծերանոցը ղեկավարող Նոր Ջուղայի Հայ հանանց գթութեան միութեան վարչութիւնը, Տան յանձնախումբը եւ ծերանոցի աշխատակազմը:



Սկզբում միութեան վարչութեան նախագահուհի տկն. Արմինէ Սիմոնեանն արտայայտուեց բարի գալուստեան խօսքով, որից յետոյ անդրադարձաւ միութեան սկզբունքներին, կատարած բարեսիրական աշխատանքներին եւ ծերանոցի հիմնադրմանն ու գործունէութեանը: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ նաեւ պրն. Ռոբերտ Բեգլարեանը, ով գնահատեց Հայ կանանց գթութեան միութեան գործունէութիւնը՝ ծերանոցը ղեկավարելու ուղղութեամբ եւ աշխատակազմի հոգատար կեցուածքը՝ տարեց բնակիչների նկատմամբ:

Պրն. Բեգլարեանի արտայայտութիւններից յետոյ Սպահանի «Բարեկեցութիւն» կազմակերպութեան ընդհանուր տնօրէն պրն. Սադեղին շնորհաւորելով Ամանորը եւ Ս. Ծնունդը՝ ողջունեց միութեան վարչութեան եւ ծերանոցի աշխատակազմի կատարած աստուածահաճոյ գործունէութիւնը: Նա իր խօսքում յայտարարեց, որ Նոր Ջուղայի հայոց ազգային ծերանոցն իր մաքրութեան, աշխատակազմի հոգատարութեան եւ «Բարեկեցութիւն» կազմակերպութեան կողմից կատարած ցուցմունքներին ու որոշումներին ամենայն կարգապահութեամբ արձագանքելու համար, ճանաչուել է որպէս առաջին կարգի ծերանոցներից:

Ընթացքում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ մտերմիկ զրոյց, որից յետոյ «Բարեկեցութիւն» կազմակերպութեան կողմից նուէրներ յանձնուեցին տարեցներին, իսկ միութեան վարչութեան կողմից հիւրերին՝ Ամանորեայ մրգեր: Վերջում կազմակերպութեան անունից պրն. Ռոբերտ Բեգլարեանին եւ Հայ կանանց գթութեան միութեան վարչութեանը յանձնուեցին շնորհաւորական եւ շնորհակալական գրութիւններ:

### *Ամանորի առթիւ կազմակերպուած միջոցառում եւ Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզի սաների այցելութիւնը*

Հինգշաբթի՝ 2015 թուականի յունուարի 8-ի երեկոյեան, ներկայութեամբ Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութեան անդամուհիների, ծերանոցի տարեց բնակիչների եւ աշխատակազմի, տեղի ունեցաւ Ամանորեայ հանդիսութիւն, որին, ինչպէս նախորդ տարիները, իրենց ներկայութեամբ յատուկ բոյր հաղորդեցին Ն.Ջ. հայոց ազգային մակապարտէզի Դեղին խմբակի սաները, տեսչութիւնը, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի անդամները:

Ծրագրի սկզբում դպրոցի տեսչուհի տկն. Քառոլին Դիլանչեանը շնորհաւորելով Նոր տարւայ եւ Ս. Ծննդեան տօնի կապակցութեամբ՝ հանդէս եկաւ բարեմաղթանքներով, ապա միութեան վարչութեան նախագահուհի տկն. Արմինէ Սիմոնեանն եւս իր հերթին բարի գալուստ մաղթելով հիւրերին՝ շնորհակալութիւն յայտնեց նրանց՝ իրենց ամենամեայ այցելութեամբ տարեցներին զուարճացնելու եւ խանդավառելու համար:

Այնուհետեւ մանուկների կատարմամբ հնչեցին մանկական գեղեցիկ երգեր եւ արտասանութիւններ՝ ուրախացնելով տարեցներն: Քիչ յետոյ ներկայացաւ նաեւ Ձմեռ-Պապիկը, ով մանուկների հետ պարեց, երգեց եւ իր ջերմ խօսքերով մթնոլորտն առաւել ջերմացրեց:



Վերջում սաները հիւրասիրուեցին եւ Ձմեռ-Պապիկից ստացան միութեան անդամուհիների պատրաստած մրգերը, իսկ մանուկներն իրենց փոքրիկ ձեռքերով տարեցներին նուիրեցին դպրոցի պատասխանատուների կողմից պատրաստուած նուէրները:

### *Սպահանի Քաղ-խորհրդի անդամի եւ «Բարեկեցութիւն» կազմակերպութեան ծերանոցների բաժնի ներկայացուցիչների այցելութիւնը*

Հինգշաբթի՝ 2015 թուականի յունուարի 15-ի երեկոյեան ժամը 4-ից, ծերանոցում հիւրընկալուեցին Սպահանի Քաղ-խորհրդի անդամներից, «Բարեկեցութիւն» կազմակերպութեան ծերանոցների բաժնի ներկայացուցիչները եւ մի խումբ բարերար կանայք:

Այցելութեան ընթացքում ջերմ ողջոյնի խօսք ասաց տկն. Արմինէ Սիմոնեանը, որից յետոյ ամփոփ ներկայացրեց Հայ կականց գթութեան միութեան հիմնադր-

*Շարունակութիւնը՝* 40-րդ *էջում*

# úð¸. ²ÜàôÞ Úàì Ð²ÜÜÆê º ²ÜÆ Ò°èøÆ ²ÞÊ ²î ²ÜøÜ°ðÆ òàôò²Ð²Ü¸¾ê

Հայ ուս. «Զհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի կենտրոնատեղիում, կազմակերպուել էր «Բնութիւնը պահպանենք» խորագրով երկօրեայ ցուցահանդէսը, որտեղ ցուցադրուել էին «Շուշանիկ» հոգեւոր երգչախմբի ղեկավար, օրդ. Անուշ Յովհաննիսեանի ձեռքի աշխատանքները՝ պատրաստուած եւ վերամշակուած անօգտագործելի իրերից եւ նիւթերից: Ցուցահանդէսի կազմակերպման գործին օժանդակել էր Հայ ուս. «Զհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութիւնը:



Ցուցահանդէսը բացուեց ուրբաթ՝ յունուարի 2-ի կէսօրից յետոյ ժամը 4-ին, որին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը, արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկերեանը, թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը, մի շարք հրաւիրեալներ եւ համայնքի անդամներ:



Բարի գալստեան եւ ամանորեայ բարեմաղթանքներով հանդէս եկաւ օրդ. Անուշ Յովհաննիսեանը, ով յոյս յայտնելով, որ 2015 թուականին Հայ դատն արդարացի լուծում է ստանալու, բացատրեց իր ստեղծագործութիւնների կապակցութեամբ: Նա նշելով, որ այս ձեռքի աշխատանքների կերտման մտայղացումն առաջացել է պատահական՝ զովացուցչի սրուակի դէն նետման պահին, աւելացրեց, որ ցուցադրուած իրերը կարելի է համարել նաեւ իր կեանքի նոր հանգրուանը, երբ փորձել է դժբախտ պատահարի հետեւանքով իր կեանքում առաջացած անյուսութիւնն ու դատարկութիւնը փարատել եւ ստեղծագործել գրեթէ ոչնչից:

Այնուհետեւ մուտքի ժապաւէնը հատեց գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ու գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանի ձեռամբ եւ ներկաները սրահ մուտք գործելով, մօտիկից ականատես եղան ցուցադրուած աշխատանքների, որոնք բոլորը մատնանշում էին հեղինակի տաղանդը՝ սրուակներով, գունաւոր թղթերով, անձեռոցիկի տփերով, մետաղներով, թելով, չորացած ճիւղերով եւ մի շարք այլ անօգտագործելի իրերով իւրօրինակ նմուշներ ստեղծելու գործում: Ցուցադրուած ձեռքի աշխատանքների շարանում ուշագրաւ էին ամանորեայ եղեւնին խորհրդանշող արձաններն ու մոմակալները, մսուրը եւ տօնական կախազարդերը, իսկ իւրայատուկ էր յատկապէս Նոր Ջուղայի աւանդական տօնածառը, որը պատրաստուել էր չորացած ճիւղերից եւ զարդարուել բամբակով ու փշատներով:



Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը ցուցահանդէսը դիտելուց յետոյ Ամանորի առթիւ շնորհաւորանքի խօսք ուղղելով ներկաներին՝ իր ուրախութիւնը յայտնեց նման ցուցահանդէսի կազմակերպման համար եւ ասաց, *«Նոր տարին ոչ միայն ուրախութեան առիթ է տալիս, այլեւ առիթ է ինքնաքննութեան եւ յատկապէս կեանքի մասին մտածելու. մտածելու, թէ ժամանակն ինչպէս պէտք է օգտագործել: Ես ուրախ եմ, որ Անուշի նմաններն օգտագործելով իրենց ժամանակը՝ ստեղծում են նմանատիպ արուեստ»:*

Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքն աւարտեց ամանորեայ բարեմաղթանքներով եւ ուժ ու կորով մաղթեց «Զհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի անդամներին իրենց աշխատանքներում:

## ՄԱՅԵՍՏՐՕ ՀԱՄԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆԻ «ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ» ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԱՍԿԱՒԱՌԱԿԻ ՀԱՄԵՐԳ-ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

Ուրբաթ՝ փետրուարի 20-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ Կրօնական խորհրդի, տեղի ունեցաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի խմբավար Համիկ Ալեքսանդրեանի «Թիթեռնիկների պարը» դաշնամուրային ստեղծագործութիւնների ձայնասկաւառակի համերգ-շնորհանդէսը: Շնորհանդէսին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդը, քահանայից դասը, ազգային մարմինների, հայոց ազգային դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչները, հեղինակի հարազատները, արուեստագէտներ ու հոծ բազմութիւն:



Ողջոյնի խօսքով երեկոն բացուած յայտարարեց հանդիսավար՝ Մանիա Ղուկասեանը, ով ակնարկելով սկաւառակում տեղ գտած երաժշտութիւնների ստեղծմանը, կարեւորութեամբ ասաց, որ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանն իր ստեղծագործութիւնների առաջին ալբոմը նուիրել է իր ծնողներին՝ որպէս որդիական երախտագիտութեան դրսեւորում:



Ծրագրի առաջին բաժնում Համիկ Ալեքսանդրեանը կատարեց «Թիթեռնիկների պարը», «Մայրիկ», «Կեանքի անցում», «Երազ», «Հայկական պար», «Ծովի զեփիւռ», «Ծառաչուն ալիքներ» եւ «Արտոյտ» ստեղծագործութիւնները, որոնք արժանացան արուեստասէր ներկաների բարձր գնահատանքին: Ուշագրաւ էր յատկապէս երաժշտութիւններից հանդիսատեսին փոխանցւող անդորրը:

Առաջին բաժնի աւարտին հանդիսավարի միջոցով ընթերցւեց հեղինակի համառօտ կենսագրութիւնը, ապա համերգը շարունակւեց «Նոր Ջուղա», «Յուշեր», «Թանգօ», «Երկնային», «Ջայանդեռուդ», «Հայրենիք» եւ «Մանկական եռանդ» ստեղծագործութիւնների կատարմամբ, որոնց, եւ նախորդ բաժնում հնչած երաժշտութիւններին, մեծ հաճոյքով ունկնդրեցին ներկաները:



Ստեղծագործական երեկոյի աւարտին արտայայտւեց Համիկ Ալեքսանդրեանը, որը փոխանցելով իր յոյզերն ու մտորումները՝ իր խորին շնորհակալութիւնները յայտնեց բոլոր նրանց, ովքեր համերգի կազմակերպման գործում համագործակցել են իր հետ կամ իր երաժըշտութիւնների ստեղծագործման խըթանն են հանդիսացել: Նա շնորհակալութիւն յայտնեց յատկապէս ձայնասկաւառակի հնչիւնային ռեժիսոր՝ Անդրէ Պարսամեանին, գրաֆիկական ձեւաւորող՝ Արին Օհանեանին, բացատրական գրութեան թարգմանիչ՝ Հայդուկ Վարդեւանին, Յովիկ Բաղումեանին, Ռիմա Սիմոնեանին եւ համերգի բեմայարդարման աշխատանքը կատարող՝ Լուսինէ Մարուքեանին: Մայեստրոն իր խօսքում նշելով, որ արուեստագէտը լսելով հանդիսատեսի կարծիքը եւ ստանալով նրա դրական լիցքերը, սկսում է արարել:

Վերջում իր հայրական օրհնանքը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը: Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը շնորհաւորելով եւ գնահատելով երիտասարդ երաժիշտ-խմբավարին, աւելացրեց. «*Աւելի քան մէկ ու կէս ժամ ապրեցինք եւ վայելեցինք երաժշտական համարները: Համիկ Ալեքսանդրեանն իր մատների հարուածներով իր բոլոր ապրումներն ու զգացմունքները դրսեւորեց եւ մենք վայելեցինք այդ բոլորը: Նրա իւրաքանչիւր երաժշտական համարը, որը լսեցինք մի քանի րոպէների ընթացքում, երկար տարիների ապրումների արդիւնք էր*»: Թեմակալ առաջնորդը վերջում երիտասարդներին յորդորեց՝ նման ասպարէզների մէջ մտնելով, աշխատեն ու մասնագիտանան:

## ՇԱՀԻՆՇԱՀՐ

### ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգշաբթի՝ 2015 թուականի յունուարի 1-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տարեմուտի առթիւ մատուցուեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի նախագահութեամբ, արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ:



Ս. Պատարագի քարոզի պահին իր բովանդակալից խօսքը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբը, որը ինչպէս միշտ յորդորեց հաւատացեալներին գալիք տարւան եւս որդեգրեն առաքինի եւ աստուածահաճոյ ապրելակերպ, որով անտարակոյս արժանի կը դառնան Տիրոջ հոգատարութեան եւ հովանաւորութեան: Իր քարոզի աւարտին հոգշ. Հայր Սուրբն աղօթք բարձրացնելով առ Աստուած, հայցեց համայն մարդկութեան համար լինի խաղաղութեան, առողջութեան եւ համերաշխութեան տարի:

Եկեղեցում ներկայ էր հաւատացեալ ժողովուրդ, որը Ս. Պատարագի ընթացքում հաղորդութիւն ստացաւ եւ տարւայ առաջին օրը Բարձրեալին գոհութիւն մատուցելով, հայցեց մարդասէր Աստծու օրհնութիւնն ու գթառատութիւնը:

Երկուշաբթի՝ յունուարի 5-ին, կէսօրից յետոյ ժամերգութիւն եւ Ճրագալոյցի Ս. Պատարագ մատուցեց՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի նախագահութեամբ: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նախատօնակ եւ աւետում Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան:

Այնուհետեւ երեքշաբթի՝ յունուարի 6-ի առաւօտեան մատուցեց Ս. Պատարագ՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների առիթով՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ: Իսկ յաւարտ Ս. Պատարագի կատարուեց Ջրօրհնէքի արարողութիւն՝ Արին Թորոսեանի խաչքաւորութեամբ, որից յետոյ Հայր Սուրբը դպրոցի սրահում ընդունեց շնորհաւորանքներ:

### ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ

Շաբաթ, 2015 թուականի յունուարի 3-ի առաւօտեան ժամը 9:00-ին, Շահինշահրի Ուսումնա-դաստիարակչութեան հիմնարկի պատասխանատուներ եւ պաշտօնատարներ այցելեցին Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոց եւ տեսակցութիւն ունեցան Համայնքի վարչութեան անդամների, դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի հետ: Այցելու պատուիրակութիւնը, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ իր ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքը փոխանցեց:

Դպրոցի տեսուչ պրն. Ղոջավանդը եւս իր հերթին դպրոցի անձնակազմի անունից շնորհակալութիւն յայտնեց ցուցաբերած ուշադրութեան համար եւ ապա մի ամփոփ զեկոյց ներկայացրեց դպրոցում կատարւած ուսումնա-դաստիարակչական աշխատանքներից եւ ուսուցչական կազմի ծաւալած գործունէութիւնից:

Վերոնշեալ պատուիրակութիւնն իր գոհունակութիւնը յայտնեց՝ դպրոցի անձնակազմի հետեւողական աշխատանքի կապակցութեամբ, որ նոյնիսկ աշակերտութեան թւի զգալի նւազեցմամբ հանդերձ, իւրաքանչիւր աշխատանք գործադրում է ամենայն հոգատարութեամբ եւ աչալրջութեամբ՝ յօգուտ աշակերտների մտաւոր զարգացման եւ ուսումնա-դաստիարակչական առաջադիմութեան:



Սոյն հանդիպմանը, վերոյիշեալ հիմնարկութեան կողմից Համայնքի վարչութիւնն եւս արժանացաւ բարձր գնահատանքի՝ հայոց ազգային դպրոցին ցուցաբերած յարատեւ նիւթա-բարոյական հովանաւորութեան համար:

Հարկ է նշել, որ հիմնարկութեան անունից Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով հրաւիրուեցին դպրոցի անձնակազմը եւ Համայնքի վարչութիւնը՝ յաջորդ օրը հիւրընկալուելու «Խանէ մօալլէմ» սրահում:

Համեստ հիւրասիրութիւնից յետոյ, ներկաները լուսանկարուեցին եւ նորանոր ձեռքբերումներ մաղթելով հրաժեշտ տուեցին:

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԽՐԱԽՃԱՆՔ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ՝ երկուշաբթի՝ 2015 թուականի յունուարի 12-ի երեկոյեան կազմակերպուել էր Ամանորեայ խրախճանք, վերոնշեալ դպրոցների աշակերտութեան համար՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում:

Բացման խօսքով հանդէս եկաւ հայերէն բաժնի փոխտեսուչ պրն. Զանիկ Թահմազեանը, որը բարիգալստեան խօսքն ուղղելով ներկաներին շնորհաւորեց Ամանորը եւ Ս. Ծննդեան տօները՝ յոյս յայտնելով, որ գալիք տարին կը բերի իր հետ նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ աշակերտների ուսումնա-դաստիարակչական կեանքում:



Սոյն հանդէսն ընդգրկում էր երկու բաժին՝ գեղարուեստական ծրագիր եւ աշակերտական խրախճանք: Առաջին բաժնում, որին հրաւիրուել էին համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ ծնողները, դպրոցի աշակերտները կատարեցին խանդավառ երգեր՝ երաժշտութեան ուսուցչուհի տկն. Աննա Դանիէլեանի նւագակցութեամբ: Իրենց ասմունքներով եւ երգերով ելոյթ ունեցան նաեւ աշակերտուհիներ Սերլի Ղարախանեանը, Վանայ Յակոբ-Չաքերեանը, Էլենի Զէյնալվանդին, Վանէ Թահմազեանը, Ալիքա Թորոսեանը եւ Արփա Վարդանեանը, որոնք արժանացան ներկաների բարձր գնահատանքին:

Ծրագրի պաշտօնական բաժնի աւարտին բեմ հրաւիրուեց հոգշ. Հայր Սուրբը՝ իր հայրական պատգամը փոխանցելու, ով իր ուրախութիւնը յայտնեց աշակերտներին տակաւին տեսնելով Ամանորեայ բուռն տրամադրութեան մէջ: Նա բարձր գնահատեց հայ ծնողի եւ ուսուցչի դերը՝ հայ աշակերտին հայեցիօրէն դաստիարակելու նւիրական գործում: Այնուհետեւ իր գոհունակութիւնը յայտնեց այսպիսի գեղեցիկ հանդէսներ կազմակերպելու կապակցութեամբ, որոնց ընթացքում հայ աշակերտն իր լաւագոյնն է դրսեւորում՝ հայերէն երգ ու ասմունք կատարելիս: Իր խօսքի աւարտին, նա խրախուսեց բոլորին, որ գալիք տարւայ ընթացքում միմեանց սիրելով, յարգելով եւ հովանաւորելով՝ գեղեցիկ պարտէզ բացեն՝ բարութիւններով ու լաւութիւններով լի, որտեղ միշտ կը թեւածեն բարին, վսեմն ու գեղեցիկը:



Իսկ ծրագրի երկրորդ բաժնում աշակերտներն ուսուցիչների եւ Ծնողական խորհրդի հետ միասին շարունակելով խրախճանքը, վայելեցին շնորհալի երաժիշտ, բոլորի կողմից սիրուած, Մարտին Յովհաննիսեանի ուրախ երգն ու երաժշտութիւնը՝ մտերմիկ ու ջերմ մթնոլորտում: Նրանք վայելեցին նաեւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ պատրաստուած համեղ ուտեստներն ու քաղցրաւենիքները: Խրախճանքի պահին հասաւ նաեւ Ձմեռ-Պապին, որին դիմաւորեցին ներկաներն իրենց ուրախ բացականչութիւններով:

Եւ այսպէս զւարթ ու անհոգ պահեր ապրելուց յետոյ, բոլորը թողեցին սրահը քաղցր ու անմոռանալի յուշերով:

## §êð´àò ì ²ð¸ ²Ü²Üò¦ îúÜÀ Þ ²ÐÆÜ Þ ²Ðð àôØ

Շահինշահրի եկեղեցու սրահի եւ դպրոցի անւանակցութիւնը պատեհ առիթ համարելով, 2013 թւականից սկսեալ, արդէն երրորդ տարին էր, որ Սրբոց Վարդանանց տօնին, Շահինշահրում տեղի ունեցաւ մատաղօրհնէքի արարողութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի հովանաւորութեամբ եւ Համայնքի վարչութեան նախաձեռնութեամբ: Օրւայ խորհրդին ներկայ էին համայնքի պատգամաւորները, միութիւնների ու անձնակազմերի ներկայացուցիչները եւ մի խումբ հաւատացեալներ:

Խորհուրդ ունեցողներից հանգանակած գումարով գնւեց մատաղացու ոչ-

խար եւ չորեքշաբթի՝ 2015 թւականի փետրուարի 11-ին Շահինշահրի Հայոց ազգային դպրոցի բակում կատարւեց Աղօրհնէքի արարողութիւն՝ հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ, ապա տեղի ունեցաւ ոչխարի զենում:



Հարիսա եփելու գործը յանձնարարւել էր Համայնքի վարչութեան կողմից նշանակւած յանձնախմբին, որն ամբողջ գիշեր ուշադրութեամբ հսկեց աշխատանքը:

Հինգշաբթի՝ փետրուարի 12-ի առաւօտեան, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Գումանեանը «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց, որին ներկայ էին նաեւ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը եւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեանը, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը, Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան անդամները, ազգային մարմինների ներկայացուցիչները, համայնքի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի, «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» միջնակարգ դպրոցների ուսուցչական կազմերը, աշակերտութիւնը եւ բազմաթիւ հաւատացեալներ:



Ս. Պատարագի երգեցողութիւնը, ինչպէս միշտ կատարեց համայնքի «Նարեկ» հոգեւոր երգչախումբը, իսկ օրւայ խորհրդին սպասարկեց Սարկաւագաց դասը:

Սրբոց Վարդանանց զօրավարների եւ 1036 նահատակ վկաների յիշատակին մատուցւող հանդիսաւոր այս պատարագի ընթացքում, յաւուր պատշաճի այսպէս ք՝արոզեց Թեմիս Բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը. «*Մենք բոլորս հաւաքւել ենք յիշելու եւ նայելու մեր անցեալին. տօնելու, բայց նայելով անցեալին՝ կարողանալու կերտել մեր ապագան: Պէտք է կերտենք մեր ժողովրդի ապագան, որովհետեւ մեր հայրերը՝ Վարդանի ժառանգորդները, մեզ կտակել են այդ հաւատը, ուժն ու կամքը: Այս տարի* 100*-ամեակն է Հայոց ցեղասպանութեան, որի յիշատակումով մենք յիշելու մեր նահատակներին: Լսելով մեր նահատակների ձայնը, հաւատարիմ մնալով այդ կտակին՝ մենք պէտք է շարունակենք մեր պահանջատիրական պայքարը, այնքան ժամանակ, որ մեր ժողովուրդն իրաւազրկւած է, մեր ժողովրդի իրաւունքները խլւած են իրենից, եւ թշնամին շարունակում է ուրանալ, չխոստովանել իր կատարած սխալը… Որպէս քաջ Վարդանի յաջորդներ ու ժառանգորդներ յանձնառու պէտք է լինենք մեր մայրենի լեզուն պահպանելու, հաստատ եւ ուժեղ պահելու մեր աւանդութիւններն ու սովորոյթները, ու մանաւանդ անտարբերութեան մէջ չլինելու, այլ հաւատարիմ լինել մեր հայրերի հաւատին ու կտակին, մեր արժէքներին ու սրբութիւններին: Այն ժամանակ մենք ազգովին կապրենք այնպէս՝ ինչպէս Վարդանանց հերոսները ցանկացան, եւ գիտակից գոհողութեամբ հաւատացին, որ «Մահ իմացեալ անմահութիւն է»*»:

Սուրբ Պատարագից յետոյ, տեղի ունեցաւ մատաղի օրհնութիւն, որից յետոյ այն բաժանւեց ներկայ հաւատացեալներին, եւ նաեւ բացակայ կարիքաւոր ընտանիքներին:

Այնուհետեւ հրաւիրեալները վայելեցին օրւայ առիթով կազմակերպւած ճաշկերոյթ, որի ընթացքում հնչեցին բարեմաղթանքներ եւ Սրբոց Վարդանանց տօնին նւիրւած գեղեցիկ երգեր:

# ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ՆՇԻԵՑ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԸ

Չորեքշաբթի՝ 2015 թւականի փետրուարի 13-ի երեկոյեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում կատարւեց Տեառնընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն՝ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ, դպրաց եւ սարկաւագաց դասերի ներկայութեամբ: Յընթացս եկեղեցական արարողութեան ընդունւեց նորածինների տաճար ընծայման խորհրդաւոր կարգը:



Եկեղեցական արարողութեան աւարտին, հոգշ. Հայր Սուրբը հանգամանօրէն բացատրեց Տեառնընդառաջի խորհուրդը եւ նրա հետ կապւած ժողովրդական ծիսական մի քանի սովորութիւններ: Նա իր քարոզի աւարտին այսպէս արտայայտւեց. «*Փառք եւ գոհութիւն Ամենակալ Աստծուն, որ այսօր մենք կարողացանք մէկ անգամ եւս համախմբւել եւ տօնել Տեառնընդառաջը, յիշել մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի տաճար ընծայման տօնը: Նաեւ այսօր կրակը տեսնելով մենք ուզում ենք մաքրել մեր մտքերը, մեր հոգիները եւ երթալ ընծայւել Աստծուն, որպէսզի մեր կեանքն իմաստաւորւի*»:



Այնուհետեւ Համայնքի վարչութեան անունից շնորհաւորելով Տեառնընդառաջը՝ հոգշ. Հայր Սուրբն օրհնեց նորածիններին ու բարեմաղթեց նորապսակներին արեւշատութիւն, սէր, փոխ-յարգանք եւ ընտանեկան ջերմ օջախ:

Նախատօնակի հանդիսաւոր արարողութիւնից յետոյ, ժամը 7-ին, հոգշ. Հայր Սուրբի աղօթքով եւ նորապսակ զոյգերի միջոցով բոցավառւեց դպրոցի բակում տեղադրւած հսկայ թուփը: Եւ այսպէս տօնական մթնոլորտը շարունակւեց կրակի շուրջ:



Այնուհետեւ նորապսակ զոյգերը եւ նորածինները իրենց ծնողների հետ անցան դպրոցի միջնասրահը, որտեղ նրանց դիմաւորեցին հոգշ. Հայր Սուրբը, միջոցառումը կազմակերպող Համայնքի վարչութիւնն ու Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամները:



Յանուն Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան, տկն. Անահիտ Օհանեանը շնորհաւորելով նորածինների ծնողներին եւ նորապսակ զոյգերին, խօսքը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբին, որը նախ շնորհակալութիւն յայտնեց վերոյիշեալ միութեան՝ Համայնքի վարչութեան հետ իրենց ցուցաբերած համագործակցութեան համար, ապա իր բարեմաղթանքի խօսքն ուղղելով հրաւիրեալներին՝ աղօթեց առ Աստւած, որպէսզի Բարձրեալը երկար կեանք, յաջողութիւն եւ առողջութիւն պարգեւի նրանց, այնպէս որ նրանք միշտ վայելեն կեանքի քաղցրութիւնը, ծլեն ու ծաղկեն եւ բազմանան:

Բովանդակալից խրատներից յետոյ, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որի ընթացքում իրենց գեղեցիկ երգերով ելոյթ ունեցան բրշն. Ռազմիկ սրկ. Գալստանեանը եւ պրն. Արմոնդ Հախնազարեանը:

Ծրագրի աւարտին հրաւիրեալները հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ ստացան յուշանւէրներ՝ արժանանալով հոգշ. Հայր Սուրբի օրհնանքին:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ



2015 թւականի փետրուարի 14-ի առաւօտեան ՝ Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանում տօնւեց Տեառնընդառաջը:

Նախ տեղի ունեցաւ աւանդական հրավառութիւնը: Ծնողական խորհրդի միջոցով դպրոցի բակում պատրաստուել էր հրավառութեան թուփը, որը վառւեց փոքրիկների հետաքրքիր հայեացքների առջեւ:

Դպրոցի սաներն իրենց դաստիարակների հետ կրակի շուրջ պտտուելով ուրախ երգեցին եւ նրանց օգնութեամբ ցատկեցին կրակի վրայից՝ վայելելով հաճելի պահեր:

Ծրագրի վերջում մանուկներն ստացան գունեղ փաթեթւորումներով քաղցրաւենիքներ եւ վերադարձան իրենց տները՝ գեղեցիկ յուշերով:

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ տօնւեց Բուն Բարեկենդանը, երկուշաբթի՝ 2015 թւականի փետրուարի 16-ի առաւօտեան:

Օրւայ առիթով սաները զգեստաւորուել էին զանազան կերպարներով եւ մէկ առ մէկ խանդավառութեամբ ներկայանալով ծնողներին՝ իրենց երգով, պարով եւ արտայայտութեամբ մեծ հաճոյք պատճառեցին նրանց:

Դիմայարդարման աշխատանքը կատարել էր օրդ. Նայիրի Շիրւանեանը:

Խրախճանքից յետոյ, հիւրասիրւեցին սաները եւ ծրագրի աւարտին ստանալով օրւայ խորհրդին համապատասխան գեղեցիկ մրգեր՝ մեկնեցին տուն:



## 2014 ԹՈՒԱԿԱՆԻ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՕՏ ՊԱՀ ԴՐՈՒԱԾ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՑ

**Ա) Գալուստ, Մուրասա, Նարդ եւ Լուսիկ հիմնադրամ** *(Լեւոն Մինասեանի կողմից)*

*Կրթական խորհրդին՝* ............ 6,000,000 *ռիալ*
*Համալսարանականների կրթական նպաստի ֆոնդին՝* ............ 6,000,000 *ռիալ*
*Բարեսիրական մարմնին՝* ............ 6,000,000 *ռիալ*
*Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան՝* ............ 6,000,000 *ռիալ*
*Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝* ............ 8,000,000 *ռիալ*
*Ն.Ջ. եկեղեցիների, դպրոցների եւ ազգային ու մշակութային կառոյցների նորոգութեան՝* ............ 6,000,000 *ռիալ*

**Բ) Սէթ եւ Ծողեր Եսայեաններ հիմնադրամ**

*Կրթական խորհրդին՝* ............ 5,100,000 *ռիալ*
*Կրօնական խորհրդին՝* ............ 3,400,000 *ռիալ*
*Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝* ............ 3,400,000 *ռիալ*
*Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան՝* ............ 5,100,000 *ռիալ*

**Գ) Ժենիկ Աւետիքեան (Աբթէքեան) հիմնադրամ**

*Կրթական խորհրդին՝* ............ 33,000,000 *ռիալ*
*Բարեսիրական մարմնին՝* ............ 33,000,000 *ռիալ*

**Դ) Վահան, Անահիտ եւ Հերոս Վարդեւանեաններ**

*Կրթական խորհրդին (կրօնական-հայեցի դաստիարակութեան)՝* ............ 10,000,000 *ռիալ*
*Կրօնական խորհրդին՝* ............ 10,000,000 *ռիալ*

**Ե) Չարլզ Էդգար հիմնադրամ**

*Բարեսիրական մարմնին՝* ............ 40,000,000 *ռիալ*

**Զ) Սոֆիա Մաջուրեան հիմնադրամ**

*Բարեսիրական մարմնին՝* ............ 30,000,000 *ռիալ*
*Կրօնական խորհրդին՝* ............ 30,000,000 *ռիալ*
*Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝* ............ 30,000,000 *ռիալ*

**Է) Գառնիկ Բայիլ հիմնադրամ**

*Բարեսիրական մարմնին՝* ............ 4,500,000 *ռիալ*

**Ը) Կօշկակար Մատթէոս հիմնադրամ**

*Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝* ............ 10,000,000 *ռիալ*

**Թ) Բարդուղ եւ Երանուհի Բարդուղեաններ հիմնադրամ**

*Բարեսիրական մարմնին՝* ............ 8,600,000 *ռիալ*
*Կրթական խորհրդին՝* ............ 8,600,000 *ռիալ*
*Կրօնական խորհրդին՝* ............ 8,600,000 *ռիալ*
*Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝* ............ 8,600,000 *ռիալ*

**Ժ) Զանի Յովհաննիսեան հիմնադրամ**

*Բարեսիրական մարմնին՝* ............ 10,000,000 *ռիալ*

**ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ։**

# ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ն.Ջ. Հայոց առաջնորդական եկեղեցեաց վարչութիւն

***Ս. Գէորգ եկեղեցի***

- 1,500,000 ռիալ. Ժորժ եւ Հրաչիկ Ծատուրեաններ զաւակներով՝ Ազատուհի Ծատուրեան-Վարդումեանի յիշատակին:

- 1,000,000-ական ռիալ. Ռաֆիկ եւ Սրբուհի Թահմասեաններ՝ Ազատուհի Ծատուրեան-Վարդումեանի յիշատակին, Էլհամ եւ Օմիդ

- 500,000-ական ռիալ. Սաքօ Փիլիոսեան՝ Վարդուհի Քեշիշեանի յիշատակին, Ռուբէն եւ Վրէժուհի Թահմազեաններ՝ Ազատուհի Ծատուրեան-Վարդումեանի յիշատակին, Գայիանէ Գէորգեան, ոմն (2 պարագայ)

- 300,000 ռիալ. Բոքուանի

- 200,000 ռիալ. Հրայր Ստեփանեան

***Խաչի զոյգելու առթիւ***

- 500,000 ռիալ. Անահիտ Աղախանեան

- 450,000 ռիալ. Հռիփսիկ Այլազեան

- 100,000-ական ռիալ. Հենրիկ Յակոբեան, Վոլգա Դէհբաշեան, Ալինա եւ Արմէն Խաչիկեաններ, Ժանէթ Գրիգորեան

***Զանազան***

- 78 հատ պնակ. Աննիկ Մինասեան-Քեշիշեան

- Սկիհի ծածկոց եւ 16 արծաթայ խաչ. Սիլվարդ Թորոսեան

***Ս. Մինաս եկեղեցու տօնի առթիւ***

- 150,000 ռիալ. Սեդրակ Պետրոսեան

- 100,000-ական ռիալ. Էլիզ Խաչիկեան, Նււարդ Վարդանեան, Թենի Ջահիջանեան

- 50,000 ռիալ. ոմն՝ Գալստան Մկրտչեանի յիշատակին

***Ս. Ստեփանոս եկեղեցու տօնի առթիւ***

- 2,700,000 ռիալ (հիւրասիրութեան գումար). Ովսան Ստեփանեան՝ ամուսնու եւ որդու յիշատակին

- 500,000 ռիալ. Թաթուլ Ալլահվերդեան

- 200,000 ռիալ. Առիւծ եւ Թագուշ Խաչատրեաններ, Անդրանիկ եւ Սեդիկ Մինասեաններ՝ Ջարդիկ Մինասեանի 40-օրեակի առթիւ

- 100,000-ական ռիալ. Վեհանուշ Խուդաբախշեան, Էլհամ, ոմն

***Ս. Յովհաննու եկեղեցու տօնի առթիւ***

- 200,000-ական ռիալ. Նււարդ Կիրակոսեան, Ժենիա Կիրակոսեան

- 100,000 ռիալ. Էրիքա Գէորգեան

***Ս. Սարգիս եկեղեցու տօնի առթիւ (մատաղ)***

- 5,000,000 ռիալ. Արտաշ Մէլիքեան եւ Խաչխան Սահակեան

- 4,600,000-ական ռիալ. Վահան եւ Սոնիկ Սոհրաբիներ, Դաւթեան ընտանիք, Արա Զարգարեան

- 4,370,000 ռիալ. Գալստան Թորոսեան

- 4,255,000 ռիալ. Անուշ Թահմազեան-Մարկոսեան

- 4,082,500 ռիալ. Գարեգին Մարկոսեան

- 4,000,000-ական ռիալ. Քրիստ Ղոյումջեան, Վեհանձն եւ Վանասիս Օրօջեաններ եւ Արէն, Առնի, Լիանա եւ Համբիկ Պետրոսեաններ, Ադենա եւ Աննա Ջահբազեաններ

- 3,850,000 ռիալ. Վարդան Մառուկեան

- 4,370,000 ռիալ. Յարութիւն Յակոբեան

- 2,000,000-ական ռիալ. Գէորգ Քեշիշեան՝ ընտանեօք, Սերժիկ եւ Կարէն եւ Փաթրիկ եւ Էմանուէլ Յարութիւնեաններ

- 1,000,000-ական ռիալ. Մարինա եւ Կարէն Ղարախանեաններ, Սերժիկ եւ Մոնիկա Պարսամեաններ, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Սերժիկ Քեշիշեան

- 500,000 ռիալ. Պօղոս Թահմազեան, Արեւիկ եւ Ֆլորա եւ Ֆրիդա եւ Թաթուլ Ալլավերդեաններ

- 200,000 ռիալ. Հրաչիկ Յովսէփեան

- 100,000-ական ռիալ. Սուդաբէ Էշղի, Սոլմազ Էշղի

***Ս. Սարգիս եկեղեցու տօնի առթիւ***

- 5,000,000 ռիալ. Գառնիկ Զարգարեան

- 2,000,000-ական ռիալ. Արմոնդ եւ Ալենուշ Յակոբեաններ, Արէն Դաւթեան, Սոֆիկ Պօղոսեան՝ Ղուկաս Գալստանեանի յիշատակին, Մահբուբէ Ջարիֆի

- 1,700,000 ռիալ. ոմն

- 1,500,000-ական ռիալ. Հոմա Առին, Ժալէ Սալեհի

- 1,000,000-ական ռիալ. Անասիկ եւ Նարբէյ Կարապետեաններ, Տիգրանուհի Օրօջեան, Անայիս եւ Արազ Ծատուրեաններ, Արաքս Բարսեղեան, Արշամ Ղազարեան, Ջաւէն Կիրակոսեան, Անահիտ Թահմազեան, Ջաւէն Մուրադեան, Սեդա Սիմոնեան, Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ, Քրիստին Խաչատրեան

- 600,000 ռիալ. Սերլի Թորոսեան եւ Էմին Յարութիւնեան եւ Արէն Զարգարեան, Գամեր եւ Գալիա եւ Գառնի Դիլանչեաններ

- 500,000-ական ռիալ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Արփի Ղազարեան, Անի եւ Դուրան Տէր Յովհաննիսեաններ, Ալֆրեդ Բաբումեան, Մուշեղ Ղարիբեան, Էջմին Աբդալեան, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Փիլիկ Պարսամեան, Սիմիկ Ղարախանեան, Ալվարդ Զարգարեան, Կարինէ Զարգարեան, Գառնիկ եւ Արմինէ Կիրակոսեաններ, Նււարդ եւ Արտեմ Եադգարեաններ, Տիգրանուհի Ղեւեան, Սելին Ղարիբեան, հայ զինւորի, Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Մառիթա Կարապետեան, Մանաս Աղախանեան, Գառնիկ Սարգսեան, Մարօ Սահակեան, Գրիշ եւ Վարդուհի Քալանթար-Օհանեաններ, Կարինէ Պօղոսեան, Արմենակ Ծատուրեան, Էմին եւ Մէլին Թորոսեաններ, Թորոսեան ընտանիք, Սերոժ Ջահիջանեան, Ռոբերթ Սարեան, Արմինէ Հայրապետեան, Հրանուշ Թահմազեան, Փիլիկ եւ Արմէն Ղուկասեաններ՝ Արեւիկ Մկրտչեան-Ղուկասեանի յիշատակին, Ռազմիկ Յովսէփեան, Էջմին Խաշաքի, Ցոլակ եւ Արաքս Յարութիւնեաններ, Հերմինէ Թահմազեան, Մուշեղ Այլազեան, Հերոս Տէր-Մարտիրոսեան, Ալբերթ եւ Հիլդա Քեշիշեաններ, Արբի եւ Մելինէ Բաբումեաններ, Ահարոն Թորոսեան, Քրիստին եւ Քեւին Թորոսեաններ, Երւանդ Աբրահամեան, Ռուբէն եւ Անի Խաչիկ-Գրիգորեաններ, Մասիս եւ Յասմիկ Հայրապետեաններ, Սերոժ եւ Ֆրիդա Խաչիկ-Գրիգորեաններ, Մարիեթ Խոջամալ, Ջահնազ Քիամանէշ, ոմն (2 պարագայ)

- 400,000-ական ռիալ. Թէլլօ Սահակեան՝ Սարգսի յիշատակին, Անդրանիկ եւ Համբարձում Ջիրւանեաններ, Մինաս Թահմազեան

- 300,000-ական ռիալ. Վարագայ եւ Դանիա Ղարիբեան, Ռազմիկ Տէր-Մկրտչեան, Մագի Յակոբեան, Նայիրի Ջահիջանեան, Հերոս Սիմոնեան, Լալա Բաղդասարեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Աբրահամ եւ Վոլգա Մեսրոպեաններ, Անուշ Մարգարեան, Մանուշ Պօղոսեան, Սոնա Զարգարեան, Սառիկ Բաղումեան, Ալբերթ Ղազարեան, Արաքս Առաքելեան

- 250,000-ական ռիալ. Համազասպ Յարութիւնեան, Կարինէ Յարութիւնեան, Սոնա եւ Ալեքս եւ Անեթ եւ Արմինէ եւ Լիլիան եւ Էդւին Գէորգեաններ, Անժելինա Թորոսեան

- 200,000-ական ռիալ. Թորգոմ Բարսեղեան, Նորիկ եւ Մանիա Քեշիշեաններ, Յարութ Քեշիշեան, Հերմիկ Ղարիբեան, Նինելիա Քեշիշեան, Անդրանիկ Ասատրեան, Սինթիա Պօղոսեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Սթելա Ղարիբեան, Ջաքէ Բաբումեան, Գեւիկ Ասատրեան, Գէորգ Յովսէփեան, Միրօ եւ Մխիթար Խուդավերդեաններ, Երան Խուդավերդեան, Ռոբերտ եւ Ռիմա Ղարախանեաններ, Կարինէ Խաչիկեան, Մառիթա Սարուխանեան, Հրաչիկ Եռնոքեան, Հրաչիկ Ղարիբեան, Նարէ եւ Մհեր եւ Արգիշտ Մարգարեաններ, Մարգարիտ Ալեքսանդրեան, Մելքոմ եւ Ջեփիւռ Վարդեւանեաններ, Արտուշ եւ

Մարգարիտ Սիրջանեաններ, Անիթա Ալեքսանդրեան, Ժանեթ Աղախանեան, Ռազմիկ եւ Աշխէն Դիլանչեաններ, Հայկուհի Ջաւահիրեան, Մարգարիտ Հերոսեան, Ռուբէն Վարդանեան, Նարեկ Յովսէփեան, Նարեկ եւ Նինել Օրօջեաններ, Լուսիկ Մարտոյեան, Նարինէ Հայրապետեան, Պետրոսեան ընտանիք, Թադէ Յակոբեան, Րաֆֆի Վարդանեան, Քարմէն Եարիջանեան, Անէթ Դանուխ, Սարգիս Գէորգ-Խեզեռնեան, Գրիշ Դիլանչեան, Հրանուշ Փանոսեան, Քեւին Մինաս-Խաչիկեան, Մելինէ Հայրապետեան, Պայծառ Սիմոնեան, Նիքփուռ

- 150,000-ական ռիալ. Արարատ Մկրտչեան, Մասիս եւ Վարդուհի Մկրտչեաններ, Միրօ Խաչիկեան, Գոհար Գաբրիէլեան, Սերոժ Յովհաննիսեան, Մասիս Ծահբազեան, Մատթէոս Ծահբազեան, Արուսիկ Սահակեան, Արուսեակ Պօղոսեան, Սերինէ Յակոբեան, Յովսէփ Օհանեան, Խաթուն Յովսէփեան, Սիրան Սարեան

- 100,000-ական ռիալ. Վարդուշ Սարուխանեան, Թամար Գրիգորեան, Ռոզա Բեգիջանեան, Լորիկ Բաղդասարեան, Սօսէ եւ Սիւնէ եւ Սարինէ Ղարիբեաններ, Վարդուշ Ջարգարեան, Համասփիւռ Մարգարեան, Արմէն եւ Արփինէ Ալեքսանդրեաններ, Ալենուշ Սիմոնեան, Սարգիս Ծատուրեան, Հայկուշիկ Ծատուրեան, Վարդուշ Ասատրեան, Արեգնազ Տէր-Յովհաննիսեան, Սալիկ Մարտիրոսեան, Աբգար Ղազարեան, Բիւրեղ Զոհրաբեան, Ովսաննա Ղարախանեան, Լեւոնոն Թահմազեան, Վազգէն Ծատուրեան, Նւարդ եւ Սերժիկ եւ Եսայի Վարդանեաններ, Հանրիեթ Առաքելեան, Համլեթ Առաքելեան, Հենրիկ Առաքելեան, Գալստան Պարսամեան, Ռիմա Պետրոսեան, Ծողեր Քեշիշեան, Անուշ Բաղրամեան, Սոնիկ Սուքիազեան, Ժենիկ Քեշիշեան, Արմինէ Թահմազեան, Հրաչ Մուրադեան, Էմին-Արաքօ Ղազարեան, Հայկուշ Հայրապետեան, Յովսէփ Յովսէփեան, Դւին Վարդանեան, Համբարձում Սահակեան, Ժենիկ Յակոբեան, Արաքս Հայրապետեան, Նինէլ Մարկոսեան, Բալիկ Մարտիրոսեան, Ռիմա Դիլանչեան, Անդրէ Մինաս-Խաչիկեան, Թէլլօ Հայրապետեան, Գամեր Աբդալեան, Ռաֆիկ Թահմազեան, Ջորջ Դաւթեան, Ովսան Այւազեան, Սոնիկ Կիրակոսեան, Խորէն Խուդավերդեան, Նւարդ Մկրտչեան, Վազգէն Խուդավերդեան, Խաթուն Խաչիկեան, Արփա եւ Արէն Մարգարեաններ, Արշամ Խուդավերդեան, Հռիփսիկ Սիմոնեան, Օֆիկ եւ Յարութ Ղազարեաններ, Արազ Ղարախանեան, Նւարդ Աւետեան, Դիանա Կարապետեան, Գառնիկ Բաղդասարեան, ոմն (2 պարագայ)

- 50,000-ական ռիալ. Մառինա Թահմազեան, Եղսօ Ծահբազեան, Մեղմիկ Մանուկեան, Լեւոն Մարկոսեան, Սիմիկ Պօղոսեան, Ժերմէն Թորոսեան, Երանուշ Ծահբազեան, Մագի Տէր-Մարտիրոսեան

- 20,000 ռիալ. Ծամիր Գաբիրէլեան

***Հանգուցեալ Վրէժ Տէր-Յովհաննիսեանի տարելիցի առթիւ***

- 1,000,000 ռիալ. Հրանդ Տէր-Յովհաննիսեան

- 300,000 ռիալ. Վազգէն Մարկոսեան

- 200,000-ական ռիալ. Նորայր Թումանեան, Կարինէ Արմէն-Խաչիկեան

- 150,000 ռիալ. Յովիկ Աղախանեան

***Հանգուցեալ Նարմենուհի Մանուկեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Մանուկեան ընտանիք

- 200,000 ռիալ. Ռազմիկ Խուդավերդեան

- 150,000 ռիալ. Մասիս Ծահբազեան

- 100,000-ական ռիալ. Երւանդ Խաչիկեան, Վարդանուշ Մկրտչեան, Գառնիկ Թորոսեան, Հայկազ Պետրոսեան, Համազ Մարգարեան, Ծաղկուշ Աբելեան

***Հանգուցեալ Մասիս Փանոսեանի յիշատակին***

- 1,000,000 ռիալ. Ն.Ջ. Հայոց ազգային «Արմէն» դպրոցի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Աբդալ Յովսէփեան, Պայծառ, Խաչատուր եւ Իւեթ Փանոսեաններ

- 500,000-ական ռիալ. Ամիրխան Յովսէփեան, Վրէժ եւ Սիլւա Յովսէփեաններ, Արարատ եւ Ադրինէ Մելիքեաններ, Արթին Դաւթեան

- 300,000-ական ռիալ. Թոնի եւ Սոնիա Թադէոսեաններ, Կարօ եւ Ալվարդ Կարապետեաններ

- 200,000-ական ռիալ. Յարութ Քեշիշեան, Գասպար եւ Ովսան Յովսէփեաններ, Մասիս Պարսամեան, Ծուշիկ Փանոսեան

- 150,000-ական ռիալ. Մասիս Քեշիշեան, Հրաչ Մուրադեան, Վազգէն եւ Ժուլիեթ Անդրիասեաններ

- 100,000-ական ռիալ. Երւանդ Խաչիկեան, Հայկազ Պետրոսեան, Ջաւէն եւ Մինուշ Մելիքեաններ, Խաչատուր Ղազարեան, Սոնիկ Կիրակոսեան, Վարդան Յովսէփեան

***Հանգուցեալ Րաֆֆի Դեհբաշեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Արշալոյս Դեհբաշեան

- 300,000-ական ռիալ. Յակոբ Մարկոսեան, Արարատ Աղախանեան, Անդրէ Խուդավերդեան

- 200,000 ռիալ. Վազրիկ Մարկոսեան

- 100,000 ռիալ. Հրանոյշ Աղաբաբայեան

***Հանգուցեալ Արեգ Այւազեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Վահիկ Այւազեան

- 200,000-ական ռիալ. Եղիսաբեթ Մինասեան, Նինա եւ Նայիրի Խաչատրեաններ, Յովսէփ եւ Անուշ Լալազարեաններ

- 100,000-ական ռիալ. Գասպար ու Սալի Մարտիրոսեաններ, Սերոժ եւ Ծաքէ Խանլարեաններ, Մոսիկ եւ Հիլդա Խաչիկեաններ, Ծովինար Յարութիւնեան

***Հանգուցեալ Վարդան Ուղուրեանի յիշատակին***

- 150,000 ռիալ. Սերոժ Յովհաննիսեան

- 100,000-ական ռիալ. Սուրէն եւ Ծուշիկ Ղազարեաններ, Ջաւէն Խաչիկեան

***Հանգուցեալ Վարուժ Ասատրեանի յիշատակին***

- 200,000-ական ռիալ. Աննիկ Քեշիշեան, Վահիկ Այւազեան, Ժիրայր եւ Մելինա Ղարիբեաններ

- 150,000 ռիալ. Սիլվարդ Թորոսեան

- 100,000-ական ռիալ. Անուշաւան եւ Հրանոյշ Աղաբաբայեաններ, Աւուկ Խուդաբախշեան

***Հանգուցեալ Գասպար Յովսէփեանի յիշատակին***

- 300,000-ական ռիալ. Ամրխան Յովսէփեան, Խաչիկ Յովսէփեան, Աբդալ եւ Էդւին Յովսէփեաններ

- 200,000-ական ռիալ. Կիւրեղ Յովսէփեան, Համայակ Յովսէփեան

- 120,000 ռիալ. Ռաբերթ Ակոն

- 100,000-ական ռիալ. Սիրանուշ Յովսէփեան, Հայկուշ Խաչիկեան

- 50,000 ռիալ. Վահան Վարդանեան

***Հանգուցեալ Ժերմէն Լազարբաղալեանի յիշատակին***

- 500,000-ական ռիալ. Արարատ Օրօջեան, Աշխէն Մկրտչեան, Արարատ Մելիքեան, Վահան եւ Սոնա Սոհրայեաններ, Լուսիկ Մարտոյեան

- 300,000-ական ռիալ. Հայ ուս. Չհարմահալ միութիւն, Թաթուլ Օհանեան

- 250,000-ական ռիալ. Սարօ Պօղոսեան, Յովիկ Աւետեան, Ադրինէ Խաչատրեան

- 200,000-ական ռիալ. Վահիկ Այւազեան, Օֆիկ Գէորգեան, Տիգրանուհի Օրօջեան

- 150,000-ական ռիալ. Փաւել եւ Ռիթա Օսիփոֆներ, Էլիզաբեթ Սուքիազեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Սոնիա Միրզաբէգեան, Միքայէլ Զօհրաբեան, Սարօ եւ Մառիեթ Դաւթեաններ, Հայրապետ եւ Քրիստ Ստեփանեաններ

- 100,000-ական ռիալ. «Ծուշանիկ» երգչախումբ, Ռոբերթ եւ Անի Մկրտչեաններ, Սալիկ Մարտիրոսեան, Արա Ամրանեան, Անուշիկ Յովհաննիսեան, Անահիտ Հայկունեան, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Մինա Փառչամ

- 50,000 ռիալ. Պերճիկ Քամարզարեան

***Հանգուցեալ Աղաբէկ (Անուշ) Աբէլեանի յիշատակին***

- 100,000 ռիալ. Լուսիկ Յարութիւնեան
- 50,000 ռիալ. Սալբի Ղազարեան

**Սպահանի հայոց թեմի Կրթական խորհուրդ**

***Միութեան հիմնադրման 100-ամեակի առթիւ***

- 15,000,000 ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն

**Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմին**

***Ծննդեան տօնի տօնական ընթրիքի պատրաստման համար***

- 5,000,000-ական ռիալ. Դիանա Ղազարեան-Խաչիկեան, Տիգրանուհի Մանուրեան եւ Քարմէն եւ Ծաքէ եւ Ադրինէ Ղեւեաններ
- 3,000,000-ական ռիալ. Արին եւ Սիւնէ եւ Արինէ Մինասեաններ, Սեդա Այւազեան
- 2,000,000 ռիալ. Գեւիկ Ասատրեան

***Կարիքաւորներին օժանդակելու համար***

- 4,000,000-ական ռիալ. Դիանա Ղազարեան- Քաչիկեան, Մոնիրէ Թողռայի
- 70 զոյգ կօշիկ. Սայիդ Ռաշթչի

**Հայոց ազգ. «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոց.**

***Գրքի ցուցահանդէսի առթիւ***

- 1,210,000 ռիալ. Համիկ Ալեքսանդրեանի հեղինակած խտասալիկի եւ գրքի վաճառքի հասոյթ
- 1,000,000-ական ռիալ. Հայ կանանց գթութեան միութիւն, Սոնա եւ Նորիկ Յարութիւնեաններ
- 530,000 ռիալ. Սեւան Ղազարեանի հեղինակած գրքի վաճառքի հասոյթ
- 500,000-ական ռիալ. Հայ դատի յանձնախումբ, Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Արսինէ Անդրիասեան

**2013-14** ***ուս. տարեշրջանի աւարտական հանդիսութիւն***

- 2,000,000 ռիալ. Օդելիա Տէր Սուքիասեան
- 1,500,000-ական ռիալ. Արգամ Թորոսեան, Ադրիան Դաւթեան, Արբի Հայրապետեան
- 1,000,000-ական ռիալ. Անիա Կիրակոսեան, Արթուր Նովշադեան, Ալեքս Աբդալեան, Միրօ Ղազարեան, Մենուա Յովսէփեան
- 600,000 ռիալ. Հրաչիկ եւ Վերգինէ Միրզախանեաններ
- 500,000-ական ռիալ. Անդրիա Խաչատրեան, Նինէլ Մարկոսեան, Անիա Անդրիասեան, Անի Յարութիւնեան, Մեղմիկ Ղազարեան, Արփին Յովհաննիսեան, Արթուր Աղախանեան, Լիդա Զարգարեան
- 400,000 ռիալ. Վանայ Ծիրաւնեան
- 300,000 ռիալ. Սիւնէ Յարութիւնեան, Գայիանէ Խուդավերդեան, Արութին Ղեւոնդեան, Մարգարիտ Դաւթեան, Ժուլիեթ Սէթ-Աղայեան
- 250,000 ռիալ. Սիւնէ Ուղուրեան
- 200,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայոց ազգային «Արմէն» համալիրի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Նայիրի Յովսէփեան, Սօսէ Պօղոսեան, Ժանեթ Սիմոնեան
- 100,000 ռիալ. Արփինէ Յաղուսեան

**Ծանր հիւանդների օժանդակութեան ֆոնդ**

- 1,000,000 ռիալ. Ն.Ջ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ՝ Ժէրմէն Լազար Բադալեանի յիշատակին

**Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ**

***Տարեկան համերգի առթիւ***

- 2,500,000 ռիալ. Դիանա Ղազարեան
- 500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Ն.Ջ& Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր, Ռիմա Սիմոնեան, Վարդան Այւազեան, Փարելի Թահմազեան, Լիոնթին Աբրահամեան, Նարէ Սիմոնեան
- 300,000-ական ռիալ. Հայ ուս. Չարմահալ միութիւն, Սեւան Խաչատրեան, Անի Նովշադեան, Լալա Ալեքսանդրեան
- 200,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Կանանց հոգեւոր լսարան եւ «Ծուշանիկ» երգչախումբ, Արմէն Թահմազեան, Սեւան Ղազարեան, Արեգա Յարութիւնեան, Անուշ Յովհաննիսեան, Սեւանայ Յարութիւնեան, Մկրտիչ Աւետումեան, Արփի Դիլանչեան, Արգինէ Յովսէփեան, Վեհանուշ Խուդաբախշեան, Անասիկ Յովսէփեան, Քառոլին Վարդանեան, Վարդան Ալեքսանդրեան, Ալինա Ալեքսանդրեան

**Հայ ուս. «Չհարմահալ» միութեան Ն.Ջ.-ի մասնաճիւղ**

- 500,000 ռիալ. Անուշ Յովհաննիսեան
- 300,000 ռիալ. Սաբէթ Մինասեան՝ Էդուարդ Այւազբալեանի յիշատակին
- 200,000-ական ռիալ. Սերոժ Վարդանեան՝ Մասիս Փանոսեանի յիշատակին, Կարէն Խանլարեան
- 150,000 ռիալ. Նւարդ Բունեաթեան՝ Մասիս Փանոսեանի յիշատակին
- 100,000 ռիալ. Նւարդ Բունեաթեան՝ Անուշ Միրզայեանի յիշատակին

***Նոր տարւայ ծրագրի առիթով***

- 500,000 ռիալ. Աղասի Դաւթեան
- 300,000 ռիալ. Յաւերժիկ Կարապետեան
- 250,000 ռիալ. Սոնիկ եւ Զարդիկ Սուքեազեաններ
- 200,000-ական ռիալ. Եսայի Թորոսեան, Յովսէփ Օհանեան
- 100,000 ռիալ. Համասփիւռ Մարգարեան, Մարօ Ծատուրեան, Ովսաննա Ղարախանեան, Վարդուշ Հախնազարեան

**Փերիոյ կրթասիրաց միութիւն**

- 5,000,000 ռիալ. Ռազմիկ Տէր-Գրիգորեան՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին
- 1,000,000-ական ռիալ. Երանուշ Թահմազեան, Ժենեթ Բարսեղեան

**Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն - Ծերանոց**

- 1,500,000-ական ռիալ. Վահիկ Ունանեան, Լինեթ Ունանեան, Իշխանուհի Տէր Գրիգորեան՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին
- 500,000 ռիալ. Զանսոն Թորոսեան
- 300,000-ական ռիալ. Համլետ Ունանեան՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին, ոմն
- 200,000-ական ռիալ. Ժանեթ Աղախանեան, Ժանեթ Խաչատրեան, Արսէն Ծահբազեան
- 100,000 ռիալ. Ծահնազ Մառանդի
- 80,000 ռիալ. Արաքս Բարսեղեան
- Մէկ ճոնիկ (walker). Տէր Յովհաննիսեան ընտանիք՝ Վրէժ Տէր Յովհաննիսեանի յիշատակին

***«Տարեցների Տրաւայ» միջոցառման առթիւ***

- 2,000,000 ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ
- 1,000,000-ական ռիալ. Հայ դատ Նոր Ջուղայի յանձնախումբ, Ծահինշահրի Հայ համայնքի վարչութիւն
- 500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Փերիոյ կրթ. միութեան շահինշահրի մասնաճիւղ
- 400,000 ռիալ. Ս. Գրիգոր եւ Ս. Աստուածածին եկեղեցիների կանանց երգեցիկ խումբ:
- 300,000-ական ռիալ. Հայ ուս. Չհարմահալ միութիւն, Ծաքէ Մովսիսեան
- 200,000-ական ռիալ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Ն.Ջ. հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ծահինշահրի մասնաճիւղ, Մառիկ Մի-

նասեան, Վահէ Թորոսեան

***Աննդամթերք***

- Հայ ուս. Չհարմահալ միութիւն, Անիկ Սիմոնեան, Կարինէ Իսմայիլեան, Բալասան Մաքարդոխտ, Այդա Ղարիբեան, Կիտուշ Ղեւեան, Արաքս Յովհաննիսեան, Մերի Մինասքանեան, Ծաղկուշ Թահմազեան, Արաքս Բարսեղեան, Ադրինէ Եաղուբեան, Ժանեթ Իւնիկեան, Անահիտ Մարտիրոսեան, Ալբերտ Ղազարեան, Արմէն Բաղումեան, Էռհան, Ֆալլահփուռ, Շահնազ Մառանդի

**<u>Հայ դատի Նոր Ջուղայի յանձնախումբ</u>**

- 3,300,000 ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն
- 1,000,000 ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն
- 500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց բարեգործական ընկերութիւն, Դիանա Ղարախանեան՝ իր ամուսնու՝ Աբգար Գալըստեանի յիշատակին
- 300,000 ռիալ. Ն.Ջ. Հայոց ազգային «Արմէն» դպրոց

**<u>Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն</u>**

- 500,000 ռիալ. պրն. Յովիկ Թորոսեան՝ Ս. Ծննդեան տօնի խաչքաւորութեան առիթով

***Սրբոց Վարդանանց տօնի առիթով***

- 1,000,000-ական ռիալ. Գուրգէն Մանուկեան
- 500,000-ական ռիալ. Արմոնդ Բարֆեան, Մեսրոբ Առաքելեան, Յովհաննէս Շմաւոնեան, Մելքոն Շիրւանեան, Ջանիկ Առաքելեան, Եղիա Թորոսեան, Արսէն Ղազարեան, Նոյեմ Բարֆեան
- 400,000 ռիալ. Ռազմիկ Գալստանեան
- 300,000 ռիալ. Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ
- 250,000 ռիալ. Էլսիկ Սոհբաթեան
- 200,000 ռիալ. Շամիր Շահմիրզայեան
- 150,000-ական ռիալ. Ջարդիկ Սուքեազեան, Արիս Քեշիշեան
- 100,000-ական ռիալ. Գալստան Պարսամեան, Անդրիաս եւ Շողիկ Քէշիշեաններ

*Շարունակութիւն՝ 28-րդ էջից*

## ՉԵԿՈՅՑ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑԻ...

ման նպատակը, անցեալն ու կատարած աշխատանքները եւ Ծերանոցի հիմնադրութեան ընթացքը:

Այցելութիւնը տեւեց շուրջ երեք ժամ, որի ընթացքում հիւրերը տարեցներին այցելեցին իրենց սենեակներում եւ ծաղիկներ նւիրեցին նրանց:

*Տեառնընդառաջի նախատօնակ*

Ուրբաթ՝ 2015 թւականի փետրւարի 13-ի առաւօտեան, Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան կազմակերպութեամբ եւ Ձեռնարկային յանձնախմբի համագործակցութեամբ, ծերանոցի բնակիչների համար տօնւեց Տեառնընդառաջի նախատօնակը:

Օրւայ արարողութիւնը կատարւեց արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի միջոցով, որից յետոյ տեղի ունեցաւ աւանդական հրավառութիւն եւ համեղ հրուշակներով հիւրասիրւեցին բոլորը:

Տօնակատարութեանը ներկայ էին նաեւ միութեան անդամուհիները եւ ծերանոցի աշխատակազմը:

*Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի այցելութիւնը*



Հինգշաբթի՝ 2015 թւականի փետրւարի 20-ի առաւօտեան ժամը 11-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ընկերակցութեամբ Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանի եւ անդամ Սաքօ Տէր-Յովհաննիսեանի այցելեց հայոց ազգային ծերանոց եւ հանդիպելով կենտրոնի տարեց բնակիչներին իր հայրական օրհնանքը տւեց նրանց: Ապա այցելութիւնը վերածւեց մտերմիկ միջոցառման, որտեղ հնչեցին անհատական եւ խմբական երգեր, ասմունքներ եւ ջերմ մաղթանքներ:

---

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» միութեանն առնչւող լուրերը՝ օրդ. Երանուհ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիոլեթ Յարութիւնեանը:*

*Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը:*


**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**

خلیفه گری ارامنه جلفای اصفهان

و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115

New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjugha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@Yahoo.com

**Tel: +98–311–6243471-2**

**Fax: +98–311–6270999**

# 1915 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
## 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ



1.5 միլիոն վառուած մոմեր՝ 1.5 միլիոն հայերի համար